

«ՀՈԳԵԻՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ»
ՄԱՏԵՆԱՇԱՐ, ԹԻՎ 1

ԱՐՅԱԽԵԱՆ
ՍԱՂՄՈՍՆԵՐ



«ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ» ՄԱՏԵՆԱՇԱՐ, Թիւ 1

Հրատարակութիւն Գանատայի Հայոց Թեմին

Ա Ր Ց Ա Խ Ե Ա Ն Ս Ա Ղ Մ Ո Ս Ն Ե Ր

ԳԱՌՆԻԿ Ա. Ք. Գ.

ՄՈՆԹՐԷԱԼ

2023

Հրամանաւ
Գերաշնորհ Տ. Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեանի
Առաջնորդ,
Գանատայի Հայոց Թեմին

«Հոգեւոր Հայրենիք» մատենաշարի
անդրանիկ հրատարակութեան մեկենաս՝
Տիկին Սեդա Թապաքեան
ի յիշատակ իր ամուսնոյն
Սարգիս Թապաքեանի

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ

2023 տարուան սկիզբը, Թեմիս Կրօնական ժողովին հետ համախորհուրդ, հաստատեցինք Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի «Հոգեւոր Հայրենիք» մատենաշարը:

Ուրախութեամբ կ'ողջունենք «Հոգեւոր Հայրենիք» մատենաշարի անդրանիկ հրատարակութիւնը, որ Արժանապատիւ Տ. Գառնիկ Աագ Քահանայ Գոյունեանի հեղինակութեամբ «Արցախեան Սաղմոսներ» գրքոյկն է:

Գրքոյկին Սաղմոսներէն առաջին 24-ը՝ Արցախեան 44-օրեայ ճակատամարտին ատեն գրուած էին: Միաները գրուեցան Արցախեան տագնապալի կացութեան մէջ, որ դեռ կը շարունակուի:

Տ. Գառնիկ իր հոգեւոր ծառայութեան քովն ի վեր՝ վաստակաւոր մըն է հայ գիրին: Նաեւ մտաւորական է՝ բառին ամբողջական իմաստով:

«Հոգեւոր Հայրենիք» մատենաշարը կը սկսինք աղօթականօրէն, եւ կը մաղթենք, որ Արցախի տագնապալի կացութիւնը յաղթահարուի Տիրոջ օգնականութեամբ, հայ հոգիի առաքինութիւններուն ներգործութեամբ, եւ համահայկական յարատեւ յանձնառութեամբ ու պայքարով:

Գրիչդ դալար եւ վարձքդ կատար, սիրելի եղբայր ի Քրիստոս:

Բարգէն Արքեպիսկոպոս


Նշոյթ հեղինակէն

Սոյն գրքոյկը կ'ամփոփէ 48 սաղմոսներ: Աղօթական բխումներ են անոնք: Եւ քանի Աստուածաշնչական սաղմոսներն են եղած անոնց արտայայտութեան գալուն ոգին, այդ պատճառով ալ «Սաղմոս» անունը իւրացուած է:

48 սաղմոսներէն 24-ը գրուած էին Արցախի 44-օրեայ Պատերազմին ատեն (պիտի նախընտրէի՝ «Ճակատամարտ» բառը), եւ տետրով մըն ալ լոյս ընծայուած: Յաջորդ 24-ը՝ ետքը գրուեցան: Մինչ կը գրուէին՝ Ազգային Առաջնորդարանի Դիւանատունէն ազնիւ առաջարկը ունեցայ թէ՛ տետրին մէջ առնուածները, եւ թէ՛ գրուողները հրատարակութեան յանձնելու:

Շնորհ մըն է հեզ գրիչիս՝ Առաջնորդարանի «Հոգետր Հայրենիք» մատենաշարը բանալու առիթին ընծայումը: Բոլոր զոհողութիւններուն համար թող մոմ մը ըլլայ գրքոյկը:

«Որ բնակեալն է յօգնութիւն Բարձրելոյն,
ընդ հովանեաւ Աստուծոյ յերկինս հանգիցէ...
Որպէս գէն՝ շուրջ եղիցի գքեւ ճշմարտութիւն Նորա:
Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի,
եւ ոչ ի նետէ, որ թռչի ի տուէ,
յիրէ որ շրջի ի խաւարի,
ի գայթակղութենէ դիւին ի հասարակ աւուր...
Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո,
պահել գքեզ յամենայն ճանապարհս քո...
Ի վերայ իժից եւ քարբից գնացես դու,
եւ առ ոտն կոխեսցես զառիւծն եւ զվիշապն...», Սղ.Ղ.1,4-6,11, 13:



ԱՐՑԱԿԵԱՆ
ՍԱՂՄՈՍՆԵՐ



ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 1

Ե՛լ, ով Տէր, բարկութեամբդ կանգնե
բնաջնջելու կատաղութեամբ յարձակող թշնամիները կոխտուելով:
Օճեալ ժողովուրդիդ աղաղակը քեզի դեռ չհասան...:
Մի՛ դանդաղիր, Տէր,
այլապէս անօրէնները իրենց կամակորութեամբ պիտի լրբանան առջեւդ:
Մի՛ դանդաղիր, Տէր,
այլապէս ամբարիշտները իրենց չարագործութեամբ պիտի յոխորտան առջեւդ:
Մի՛ դանդաղիր, Տէր,
այլապէս չարացեալները իրենց արհամարհանքով պիտի կործանեն
հեզութիւնդ եւ խոնարհութիւնդ պատմող մատուռներն ու եկեղեցիները:
Մի՛ դանդաղիր, Տէր...
Յանկարծակիօրէն չարին ճամբան կտրէ,
յանկարծակիօրէն ահ ու դողի եւ փախուստի մատնէ զայն,
յանկարծակիօրէն կորուստին անդունդներուն մէջ ձգէ զայն նաեւ:
Ե՛լ, ով Տէր, որպէսզի մահը չպաշարէ քեզ պաշտողները,
եւ ամէն ոք իր շահամոլութենէն ալ հրաժարի,
ու հետամուտ ըլլայ իրաւունքի եւ արդարութեան...
Դուն որ հաւատարիմներուդ հանդէպ հաւատարիմ կ'ըլլաս,
ձեռքդ երկարէ եւ ժողովուրդդ ազատէ թշնամիներէն,
թող ան չխորհի, թէ զինք լքելով իրմէ հեռացած ես:
Ե՛լ, ով Տէր, վասն Ս. Անուանդ փառքին:



ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 2

Տէր Աստուած մեր,
Դուն որ որեւէ չարիքի հետ չես հաշտուիր,
գոռոզները չես հանդուրժեր,
կ'ատես անօրէնութիւն գործողները,
նենգամիտներն ու ստախօսները,
եւ արինահեղ մարդիկը,
ողորմութեամբդ եւ արդարութեամբդ
հայոց աշխարհի սահմաններէն հեռու պահէ զանոնք,
եւ փրկէ ժողովուրդդ որոգայթներէն, վտանգներէն ու փորձութիւններէն:
Դուն զայն ընտրեցիր, եւ ան ընտրութեանդ ընդառաջեց:
Զայն օծեցիր Որդիիդ հաւատքով, յոյսով ու սիրով:
Դուն ամօթով չես ձգեր քեզի հաւատացողները՝
այլ վստահութիւն կը ներշնչես անոնց.
ամօթով չես ձգեր քեզի յուսացողները՝
այլ քեզի հաճելի ստոյգ տեսիլքներու արժանի կը դարձնես զանոնք.
ամօթով չես ձգեր քեզ սիրողները՝
այլ զանոնք կը փրկես անմարդկայնացումէ:
Ճշմարիտ են մարգարէին բառերը,
թէ հովանիդ օծեալիդ վրայ պիտի ըլլայ միշտ.
թէ օգնութիւնդ զայն պիտի զօրացնէ.
թէ թշնամիները պիտի չկարենան պարտութեան մատնել զայն,
այլ պիտի խորտակուին...
Դուն ես այս ժողովուրդին Հայրը, ով Աստուած,
թող ան յաւերժ օրհնութիւն, գովաբանութիւն եւ փառաբանութիւն
մատուցէ քեզի՝
պահապան հովանիիդ, առաջնորդող լոյսիդ,
եւ կենսաւետող խաղաղութեանդ համար,
որովհետեւ քեզի, Որդիիդ եւ Ս. Հոգիիդ հետ միասին
վայել են պատիւ եւ փառք յաւիտեանս յաւիտենից:

ՍԱՂՄՈՍ ԹԻՒ 3

Հզոր Աստուած,

Դուն ես Տէրը բոլոր իշխանութիւններուն եւ իշխանաւորներուն,
թէ այն ատեն՝ երբ անոնք կը կատարեն ինչ որ հաճելի է քեզի,
եւ թէ այն ատեն՝ երբ Կամքէդ կը խոտորին:

Ահա մեր պապենական երկրին վրայ թշնամի յարձակումներ կը հեղեղուին:
Բարձրէն ձեռքդ երկարէ

եւ ազատէ մատուռներովդ եւ եկեղեցիներովդ պսակազարդեալ լեռնաշխարհը:

Միակ Արդար, ժողովուրդդ ատողները ետ մղէ,

որպէսզի անոնք ջոխորտան ըսելով՝ Ո՞ր է ձեր Աստուածը:

Թող անոնք տեսնեն,

թէ Դուն կը հալածես չարին կամակատարները եւ կը սպառես զանոնք.

թող անոնք տեսնեն,

թէ պատերազմի մէջ զօրութիւն կը պարգեւես հաւատարիմներուդ՝

յաղթանակներու համար, որոնք փառքդ կը պատմեն:

Մեր օրինեալ Արդարութիւնն ես Դուն, Տէր,

որ մահուան տագնապէն մեզ կ'ազատես:

Մեր օրինեալ Զօրութիւնն ես Դուն, Տէր,

որ կը յաղթես հակառակամարտին զօրքերուն:

Մեր օրինեալ Ամրութիւնն ես Դուն, Տէր,

որ կը պարսպապատես հայրենի սահմանները:

Մեր օրինեալ Կեանքն ես Դուն, Տէր,

որ վէրքերը կը բուժես, հոգիները կը վերանորոգես,

եւ աներաժութիւնները կը վերաշինես:

Բարձունքներուն վրայ կանգուն պահէ երկիրն հայրենի,

որպէսզի ժողովուրդդ միշտ արժանի ըլլայ գոհաբանութիւն մատուցելու քեզի,

Որդիիդ եւ Ս. Հոգիիդ հետ միասին.

այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 4

Արդար, Տէր,
մենք քեզի միայն կը վստահինք,
որովհետեւ մարդկային արդարութիւնը յեղյեղուկ է,
այդպէս էր ու այդպէս ալ պիտի ըլլայ...
բոլոր աղէտներէն վերջ՝ արդարութիւնդ է,
որ կը յաղթէ եւ կեանքը կը վերանորոգէ:
Դուն որ կը քննես քեզի ապաւինողներուն մտածումներն ու ցանկութիւնները,
գթութեամբդ ուղղէ զանոնք,
որպէսզի պատուիրանապահութեամբ արժանի մնան հովանիիդ:
Ապացուցած ես Դուն, Տէր,
որ չես լքեր զանոնք,
վասնզի կը շնորհես անոնց զղջումի իմաստութիւնը,
որ կը տեսնէ ազատարար եւ փրկարար առաջնորդութիւնդ,
եւ կը հետեւի քեզի:
Իսկ ամբարիշտները կը ձգես,
որ իրենց անօրէնութիւններով կրակի եւ ծծումբի լիճին մէջ իյնան...
Դուն արդարութեամբ կը դատես մարդիկն ու աշխարհը:
Քեզ խոստովանողները չես թողուր,
որ մահուան սոսկումներուն եւ իշխանութեան մատնուին,
զանոնք աչքէդ չես հեռացներ,
ականջդ անոնց խոնարհած կը պահես,
եւ կը հասնիս օգնութեան:
Դուն առաքինիները կ'ամրապնդես արիութեան մէջ,
եւ զանոնք Ս. Հոգիով կը հրազինես,
որպէսզի չարիւծին նմանակները չկարենան մերձենալ անոնց:
Որդիիդ եւ Ս. Հոգիիդ հետ միասին՝
փանք Արդարիդ.
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 5

Համբերություններուն Աստուածն ես Դուն, Տէր,
Անունդ յաւերժապէս երկայնամտութիւն կը պատմէ:
Նաեւ համբերութիւն կ'ուսուցանէ,
սակայն ոչ իբրեւ գիտութիւն մը նոր,
այլ որպէս հրաւեր արթնացման՝ շնորհին մէջ,
որ արդէն բաշխած ես այն պահէն,
երբ շունչդ փչեցիր մարդ էակի արարման ատեն:
Համբերող Տէր, նեղութեան, ցաւի, տառապանքի, վիշտի այս օրերուն,
համբերութեան շնորհիդ մէջ արթնացումը՝
նեղեալ հոգիներէն թող փարատէ մշուշը.
ցաւախոց հոգիներէն թող փարատէ մառախուղը.
տառապող հոգիներէն թող փարատէ ստուերները.
վշտակիր հոգիներէն թող փարատէ մութը.
Եւ ծագի խաղաղութեան համասփիւռ լոյսը...
Համբերութիւնը փառքիդ հաղորդակցութիւն է,
Եւ ճաշակում եւ ըմպում:
Համբերութիւնը սիրոյդ հաղորդակցութիւն է,
Եւ ճաշակում եւ ըմպում:
Համբերութիւնը խոնարհութեանդ հաղորդակցութիւն է,
Եւ ճաշակում եւ ըմպում:

Համբերութիւնը Հեզութեանդ հաղորդակցութիւն է,
եւ ճաշակում եւ ըմպում:

Համբերութիւնը արդարութեանդ հաղորդակցութիւն է,
եւ ճաշակում եւ ըմպում:

Համբերութիւնը քեզմէ խոստացեալ ժառանգութեան հաղորդակցութիւն է,
եւ ճաշակում եւ ըմպում:

Համբերութիւնը թագաւորելուդ հաղորդակցութիւն է,
եւ ճաշակում եւ ըմպում:

Այս ճանապարհին մէջ,

Դուն Պապիկին եւ Տատիկին սերունդ որդեգրեալներուդ ընկերակցելով՝
զանոնք կը պահես փորձութիւններէն.

զանոնք կը հաստատես իրենց հաւատքին, յոյսին, եւ սիրոյն մէջ.

զանոնք ամէն օր կ'արժանացնես իրենց ճշմարիտ ինքնութեան
վերագիտին,

որ քեզ, Որդիին եւ Ս. Հոգիին հետ միասին,

կը խոստովանի որպէս իր յաղթանակին Տէրը:

Անոնց գոհաբան սիրտը միշտ նորոգէ, որ նաեւ Տաճարիդ սիւներ ըլլան...:



ՍԱՂԱՄՈՍ ԹԻՒ 6

Ով Յոյս,

որ հոգիով աղքատներուն մէջ Երկնքի արքայութիւնն ես.

որ սգաւորներուն մէջ՝ մխիթարութիւնն ես.

որ հեզերուն մէջ՝ խոստումն ես ժառանգութեան.

որ մատակարարն ես արդարութեան կերակուրին

եւ ջուրին կարօտեալներուն, եւ յագեցնողը.

որ աղբիւրն ես ողորմածութիւնը ոռոգող.

որ մաքուր սրտերը տեսութեանդ արժանացնողն ես.

որ խաղաղութիւնն ես խաղաղարարներուն.

որ քաջութիւնն ես Որդիիդ նմանութեամբ իրենց խաչը վերցնողներուն,

եւ անոնց ուրախութիւնն ու ցնծութիւնն ես: Ալէլուիա:

Ով Յոյս,

Դուն քեզի յուսացողներուն ակնկալութեան ծառը չես ձգեր որ արմատախլուի,

չես ձգեր որ անոնց շափողները խաւարով ծածկուին,

չես ձգեր որ անոնց գլուխէն օրհնութեանդ պսակը վերցուի,

չես ձգեր որ անոնք տապալին: Ալէլուիա:

Նոյնիսկ երբ անկարելի է յուսալ՝ Դուն յուսալ կը ներշնչես,

որպէսզի անոնց ակնկալութեան ծառը սաղարթաւորուի եւ պտղաբերի:

Նոյնիսկ երբ անկարելի է յուսալ՝ Դուն յուսալ կը ներշնչես,

որպէսզի անոնց շափողները լուսաւորուին:

Նոյնիսկ երբ անկարելի է յուսալ՝ Դուն յուսալ կը ներշնչես,

որպէսզի անոնց գլխուն պսակը առաւել եւ առաւել իմաստնացնէ:

Նոյնիսկ երբ անկարելի է յուսալ՝ Դուն յուսալ կը ներշնչես,

որպէսզի անոնք նորոգուելով կանգնին: Ալէլուիա:

Ով Յոյս,

Դուն Որդիին եւ Ս. Հոգիին հետ զօրութիւնն ես

Ազատագրութեան եւ փրկութեան:

Փառաբանութիւն Ս. Երրորդութեանդ.

այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 7

Ով Ծագումնարանը Լոյսին,
Դուն անսահման սիրովդ առաքեցիր Որդիդ մեր փրկութեան համար:
Եւ ան խաւարին մէջ որպէս լոյս փայլեցաւ:
Անոր ճշմարիտ լոյսը խոնարհեցնելով պայծառացուց,
Եւ խոնարհեցնելով կը պայծառացնէ հոգիները բոլոր անոնց՝
որոնք քեզմէ ծնելով զինք ընդունեցին եւ կ'ընդունին:
Անոր երկինքէն էջքով է, որ ճանչցուեցար որպէս Հայր:
Քու որդիներդ քեզ Հայր կը խոստովանին.
Կը տենչան Կամքիդ կատարումը, եւ կը ճգնին անոր համար:
Ով Աղբիւրը Լոյսին,
որ ամէն օր Հայրութեանդ եւ Որդիիդ ներկայութիւնը
կը յայտնէ քեզմէ ծնեալներուն:
Ան կենդանարար է,
վասնզի քեզի աղօթողներուն օգնութեան կը հասնի,
Եւ միաժամանակ անոնց համար կը բարեխօսէ անմռունչ հառաչանքներով...
Այս յաղթանակի երազով օրերուն,
Որդիիդ Ս. Իսաչը, որ նշանն է կատարեալ ինքնընծայումին,
շնորհիւ բազում անձնագոհութիւններուն՝
վերստին կը կանգնի ի փրկութիւն թէ՛
աշխարհին, եւ թէ՛ մանաւանդ՝ մեր հայրենիքին:
Այս սուգի օրերուն,
Ս. Հոգիիդ մխիթարութիւնը
առատահոս անձրեւի պէս թող իջնէ
Հայաստանի եւ Պապիկի ու Տատիկի սգաւոր աշխարհին վրայ,
մեր սգաւոր մայրերուն եւ հայրերուն վրայ,
մեր սգաւոր քոյրերուն եւ եղբայրներուն վրայ:
Որդիդ մխիթարութեանդ աւետիսը տուաւ ըսելով.
«Մխիթարիչը՝ Ս. Հոգին, որ Հայրս ձեզի պիտի դրկէ իմ անունովս,
ան ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ որ Ես ձեզի ըսի...»:
Ան կը սորվեցնէ եւ կը յիշեցնէ Երկնքին հետ ըլլալ,
ան կը սորվեցնէ եւ կը յիշեցնէ արդարութեան հետ ըլլալ,
ան կը սորվեցնէ եւ կը յիշեցնէ աստուածայինով զինուիլ,
որպէսզի Կամքդ կատարուի:
Եկեցցէ մխիթարութիւն քո...եկեցցէ արքայութիւն քո...:

ՍԱՂՄՈՍ ԹԻՒ 8

Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, Տէր:
Եւ մի՛ տանիր...եւ մի՛ տանիր...եւ մի՛ տանիր...
Տէր, քեզմէ օտարեալ ժողովուրդը երբեք չլքեցիր Դուն,
այլ սկիզբէն անոր ուղղութիւն եղար,
եւ հետդ քալողներուն շնորհիւ՝ ճանապարհորդակից անոր:
Երկիւղիդ խորագոյն փորձառութիւնները օրինելով՝
այգիդ հաստատեցիր, ցանկապատեցիր, մաքրեցիր,
ընտիր որթեր տնկեցիր,
կեդրոնին աշտարակ շինեցիր,
այնտեղ հնձան փորեցիր,
եւ ակնկալեցիր՝ որ խաղող տար, սակայն ազոխ տուաւ...
Եւ ազոխը՝ անոր մոլորումն էր իրաւունքի եւ արդարութեան մերժումին մէջ:
Ուստի ձգեցիր որ ան ինքնալքումին յանձնուի:
Սակայն Դուն բոլոր փորձութիւնները
դէպի Լոյսդ դարձի կրթարաններու կը վերածես:
Եւ զայն չմերժեցիր, այլ վերականգնեցիր...
բայց ան վերստին ինկաւ իր նոյն կամակորութեան մէջ...
Երկայնամտութիւնդ, Տէր, զայն ազատեց չարէն բազում, բազում անգամներ,
որովհետեւ ի սկզբանէ կը տեսնէր
Կամքիդ հետ անոր կատարելապէս հանդիպման օրը, որ պիտի գայ:
Եւ այսօր, որ մեր հողն հայրենի օրհասական փորձութիւններու մէջ է,
ինչպէ՛ս չվերյիշել մարգարէին ողբերգը,
եւ ինչպէ՛ս չլսել անոր այժմ իսկ արձագանգումը,
երբ ցեղասպաններուն թոռները,
Ողջակէզէն վերապրողներու թոռներուն զէնքերով
կը սպաննեն ցեղասպանութենէն վերապրողներուն թոռները:
Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, Տէր,
այլ փրկեա՛ զմեզ ի չարէն:

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 9

Փառաւորեալ է Տէրը:

Ան մեր զօրութիւնն է եւ փրկութիւնը:

Ան մեր Աստուածն է, որ արդարութիւն կը գործէ,

որ իրաւունքը կը պաշտպանէ:

Անոր զօրութեան առջեւ հզօրները կը փոշիանան ու կը քշուին:

Անոր փրկութիւնը իր երկիւղով իմաստնացող ժողովուրդին հետ է:

Տիրոջ Աջը կը յաղթէ, իր ժողովուրդին ոսոխները կը տապալէ:

Թող անոնք յոխորտան՝ թէ պիտի հալածեն քեզ պաշտողները,

թէ պիտի հասնին անոնց,

թէ պիտի աւարը բաժնեն,

թէ զանոնք բնաջնջելով պիտի կշտանան,

եւ թէ մնացորդներն ալ պիտի մատնեն տարտղնումի կորուստին:

Տիրոջ փրկութիւնը չ'ուշանար. զի Աստուած ընդ մեզ է:

Անիկա իր ճիշդ ժամանակին կու գայ. զի Աստուած ընդ մեզ է:

Համբերողները կը տեսնեն Անոր փրկարար սքանչելիքները.

զի Աստուած ընդ մեզ է:

Փառաւորեալ ես, Տէր, որ բոլոր ելքերուն Աստուածն ես:

Աստուածն ես ստրկութենէ դէպի ազատութիւն ելքին:

Աստուածն ես անարդարութենէ դէպի արդարութիւն ելքին:

Աստուածն ես խաբէութենէն դէպի ճշմարտութիւն ելքին:

Որդեգրեալներդ քեզմով կը մխիթարուին, կը զգաստանան,

Կ'ամրանան, կը վերականգնին:

Դուն ես, որ անոնց գլուխը բարձր կը պահես՝ ի փառս Ս. Երրորդութեանդ.

այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:



ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 10

Օրհնաբանություն, Տէր, Փառքիդ:

Պահպանէ մեր հայրենի երկիրն Արցախ:

Օրհնաբանություն, Տէր, Աջիդ:

Պահպանէ մեր հայրենի երկիրն Արցախ:

Օրհնաբանություն, Տէր, Արդարութեանդ:

Պահպանէ մեր հայրենի երկիրն Արցախ:

Օրհնաբանություն, Տէր, Ճշմարտութեանդ:

Պահպանէ մեր հայրենի երկիրն Արցախ:

Օրհնաբանություն, Տէր,

քեզի յուսացողները

անյուսութեան մահէն փրկելուդ համար:

Պահպանէ մեր հայրենի երկիրն Արցախ:

Օրհնաբանություն, Տէր,

առաքինիները արիացնելուդ համար:

Պահպանէ մեր հայրենի երկիրն Արցախ:

Օրհնաբանություն, Տէր,

ամբարտաւանները ողորմութեամբդ խորտակելուդ համար:

Պահպանէ մեր հայրենի երկիրն Արցախ:

Օրհնաբանություն, Տէր,

Անուանդ հաւատարիմները խաղաղութեամբդ նորոգելուդ համար:

Պահպանէ մեր հայրենի երկիրն Արցախ:

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 11

Տէր Աստուած, որ ականադբիրն ես
արդարութեան եւ խաղաղութեան գետին,
ողորմութեամբդ զայն հոսեցուր բոլորի սրտերուն մէջ.
թող պատուիրաններուդ ճանաչման եւ իրացման հասնին անոնք՝
որ հեռու են.
թող պատուիրաններուդ ուշադիր ըլլալու եւ զանոնք իրացնելու հասնին անոնք՝
որ մօտ են.
Եւ թող պատուիրաններուդ գիտութենէն ոչ ոք զրկուած մնայ, կամ մոլորի...
Դուն ես, Տէր, որ խաւարէ եւ տարտամութենէ ելլելով գիտութեանդ մերձեցողները
արդարութեամբդ եւ խաղաղութեամբդ կ'ոռոգես.
զանոնք կ'անդրակերպես ծառերու,
եւ հոսող ջուրերուդ քով կը տնկես:
Շնորհովդ անոնք ճիշդ ժամանակին պտուղ կու տան.
պտուղ արդարութեան, եւ պտուղ խաղաղութեան
պտուղներ ճշմարիտ աստուածպաշտութեան:
Ով որ քեզ ի սրտէ կը պաշտէ՝ զայն կը լիացնես արդարութեամբդ,
որ վեր է ամէն միտքէ եւ խօսքէ.
ով որ քեզ ի սրտէ կը պաշտէ՝ զայն կը լիացնես խաղաղութեամբդ,
որ վեր է ամէն միտքէ եւ խօսքէ...
Արդարութիւնդ տարբեր է այս աշխարհի արդարութենէն,
եւ խաղաղութիւնդ տարբեր է այս աշխարհի խաղաղութենէն.
անոնցմով հաւատարիմներուդ գործերը յաջողութեամբ կը պսակես,
եւ գործերուն յաջողութեամբ կը վարձատրես զանոնք:
Իսկ անոնք որ կը յոխորտան յայտարարելով,
թէ ոչինչ կրնայ զիրենք սասանեցնել,
եւ թէ ոչ մէկ չարիք կրնայ հասնիլ իրենց,
ապա պիտի տեսնեն, թէ պիտի սասանին,
որովհետեւ իրենց գործած չարիքներէն պիտի դատապարտուին...
Տէր, անոնք որ արդարութիւնդ կ'աղերսեն՝ պիտի ուրախանան.
Եւ անոնք որ խաղաղութիւնդ կ'աղերսեն՝ պիտի ցնծան,
որովհետեւ ազատագրութիւնդ եւ փրկութիւնդ անոնց հետ պիտի ըլլայ:

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 12

Արդարեւ, Տէր, Դուն նաեւ Աստուածն ես մարտնչումներու
ո՛րջ՝ յափշտակութեան, ո՛րջ՝ իրաւագրկումի եւ անարդարութեան,
ո՛րջ՝ նուաստացման, ո՛րջ՝ ստրկացման, ո՛րջ՝ գերութեան,
այլ վասն ժառանգութեան, վասն իրաւունքի եւ արդարութեան,
վասն ազատութեան մարտնչումներու:

Քու բարի լուրդ մարդկայնացման համար է, եւ անոր հետ,
եւ չէ անմարդկայնացման համար, եւ հետն անոր.

քու բարի լուրդ անշահամոլութեան համար է, եւ անոր հետ,
եւ չէ ազահոութեան համար, եւ հետն անոր.

քու բարի լուրդ պատասխանատուութեան համար է, եւ անոր հետ,
եւ չէ անտարբերութեան համար, եւ հետն անոր.

քու բարի լուրդ բոլորի հաւասարութեան համար է, եւ անոր հետ,
եւ չէ գերակայութեան բարդոյթին համար, եւ հետն անոր:

Ա՛յո, Տէր, Թագաւորութիւնդ երկրաւոր թագաւորութիւններուն չի նմանիր,
եւ ապաշխարութեամբ ու Աւետարանիդ ընդունմամբ կու գայ:

Իմաստութիւնդ սորվեցուց նաեւ,

որ ակնկալենք Թագաւորութեանդ գալը այստեղ, եւ կատարումը Կամքիդ:

Կրաւորականութեամբ չէ, որ պիտի գայ անիկա,

եւ Կամքդ կատարուի:

Ընդդէմ չարիքներուն մարտնչումները մի՛ զրկեր հովանաւորութենէդ,

որպէսզի օծեալներուդ խաղաղասիրական յանձնառութիւնները չանհետանան:

Կամ Դուն խորտակէ բնաջնջող թշնամութիւնը,

եւ կամ՝ զօրացուր գոյապահպան մարտիկները, որ խորտակեն զայն,

բայց չմատնուին արիւնախում արբեցութեան,

քանզի Դուն ես Տէրը կեանքին:

Թող մեր պապենական երկրին մատուռներն ու եկեղեցիները

ինչպէս մարգարէ հայրապետին բազուկները՝

դէպի երկինք հանապազատարած մնան մինչեւ յաղթանակ...:

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 13

Տէրը զօրութիւններուն,

Սրբազան յիշատակագրութիւնը կը պատմէ, թէ

յետ եգիպտոսէ ելքին՝ դէպի խոստացուած երկիր ճամբուն վրայ,

Ռաբիդիմի մէջ,

Յակոբ Նահապետի սերունդը պատերազմի բռնուեցաւ:

Այն ատեն, մարգարէներուն մարգարէն բլուր բարձրացաւ եւ կանգնեցաւ:

Երբ ան ձեռքերը կը բարձրացնէր՝ իր ժողովուրդին զօրքը կը յաղթէր,

իսկ երբ ձեռքերը ծանրանալով կը ցածնային՝ զօրքը կը պարտուէր:

Ուստի քար մը բերին, որ ան նստելու պէս յենի,

եւ որպէսզի ձեռքերը բարձր մնան՝ վեր բռնուեցան Ահարոնի եւ Ովրի կողմէ,

եւ այսպէս՝ մինչեւ արեւուն մար մտնելը:

Ու թշնամիները պարտուեցան...

Տէր, Աջդ քեզ պաշտողներուն հետ է միշտ:

Նման մարգարէին, բարեգործութեան մեր հայրապետը Նպատ ելաւ

եւ իր ձեռքերը երկինք բարձրացնելով տարածեց՝ մինչեւ արեւամուտ,

երբ թշնամիները պարտուեցան...

Հայոց աշխարհը այն օրով խոստացուած երկիր մը չէր,

այլ նոր ընտրեալիդ համար արդէն երկիր էր

շնորհասփայլող գիտութեանդ համասփիւռ լոյսով,

որ պիտի դրուագէր ինչ որ հաճելի է քեզի,

նաեւ՝ հեզ մատուռներ եւ խոնարհ եկեղեցիներ...

Արդ, դարաւոր հաւատքը այսօր յենարան ամրութիւնն է քեզի հաճելի գործերուն,

եւ անոնց վկայ մատուռներուն եւ եկեղեցիներուն,


որոնք, ինչպէս ձեռքերը մարգարէին ու հայրապետին,

դէպի քեզ են երկիւղածութեամբ համբարձեալ,

եւ, ով զօրութիւն փրկութեան,

լեռնասիրտ ազատամարտիկներն են զանոնք բռնած վեր՝

վասն սերունդէ սերունդ փառքիդ յաղթանակին:



ՍԱՂՄՈՍ ԹԻՒ 14

Տէր, եղիցին Կամք քո...

Դուն գիտես միայն իրաւամբ եւ արդարօրէն չափել
արարածներուդ կատարածները,
եւ ըստ այնմ հատուցել անոնց:

Քու խորհուրդներդ եւ ուղիներդ ծածկեալ են, Տէր,
եւ ոչ ոք կրնայ յաւակնիլ ու ըսել,
թէ անոնք իրեն համար բացայայտ են:

Տէր, եղիցին Կամք քո,

սակայն ողորմութեամբդ նայէ մեր յանցանքներուն եւ մեղքերուն,
եւ սորվեցուր մեզի ուղղել մեր ընթացքը Ճանապարհիդ մէջ,
որ միաժամանակ ճշմարտութիւնն է եւ Կեանքը:

Մեզ փրկէ, որպէսզի տեսնուի,

թէ դուն իրաւունքը եւ արդարութիւնը պաշտպանող միակ Աստուածն ես:

Ինչպէս մարգարէ հայրապետը ըսած է,

Դուն գիտես, թէ իսկապէս ինչ օգտակար է մեզի,
ուստի մեզ պատրաստէ այնպէս՝ ինչպէս որ կը կամենաս.

եթէ նեղութիւնը օգտակար է մեզի, ապա թող յաճախէ.

եթէ փորձութիւնը օգտակար է մեզի, ապա թող բորբոքի.

եթէ զոհուիլը օգտակար է մեզի, ապա թող շնորհը ըլլայ ինքնամատուցուելու:

Յիշէ, Տէր, օճեալ եւ քեզի նուիրեալ ժողովուրդդ, եւ

զայն կեղծաւորներէն փրկէ, Անկէղծ.

զայն դաւադիրներէն փրկէ, Հովանի.

զայն թշնամիներէն փրկէ, Յաղթող.

զայն գազանացեալներէն փրկէ, Չգաստութիւն.

զայն յուսահատեցնողներէն փրկէ, Յոյս.

զայն ինքնալքումէն փրկէ, Քաջութիւն.

զայն խաւարէն փրկէ, Լոյս:

Տէր, եղիցին Կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի:



ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 15

Երկիրն հնամեայ, երկիրն հայրենի,
անոր բարձունքները, բլուրները, ձորերը, անտառները, մարգագետինները,
գետերը, ծառերն ու ծաղիկները, կենդանիները, թռչունները,
բնիկները հայկեան, հին ու նոր շէներն ու սրբութեան յարկերը... Եւ
իրաքանչիւր տարրը անոր բնութեան ու ինքնարարման՝ օրինէ խաղաղութեամբդ:
Արդարեւ, Տէր, ամեն ինչի ժամանակը կայ.
Ծնելու ժամանակը, եւ՝ մեռնելու,
լալու ժամանակը, եւ՝ ծիծաղելու,
հեծեծելու ժամանակը, եւ՝ ցնծալից ցատկոտելու,
պատերազմի ժամանակը, եւ՝ խաղաղութեան...
Ամեն, ամեն ինչ իր ժամանակն ունի:
Կ'աղաչենք սակայն, որ ծառաներդ եւ աղախիններդ
ալ ծնին ու մեռնին խաղաղութեան մէջ,
եւ ոչ՝ պատերազմի.
ալ լան ու ծիծաղին խաղաղութեան մէջ,
եւ ոչ՝ պատերազմի.
ալ հեծեծեն եւ ցնծալից ցատկոտեն խաղաղութեան մէջ,
եւ ոչ՝ պատերազմի.
ալ անոնց կեանքն ամբողջ անցնի խաղաղութեան մէջ,
եւ ոչ՝ պատերազմի...
Թող օծեալներդ խաղաղութեամբ մատչին Խաղաղութեանդ:
Թոյլ մի՛ տար, որ ողբեր գրաւեն զանոնք,
այլ արիանան Աջակցութեամբդ,
եւ հասնին զարմանահրաշ օրերու պարգեւիդ:
Իսք եթէ Որդիիդ Իսաչի նոյն ճանապարհը կ'ակնկալես անոնցմէ,
ապա մարդկութեան վախճանական դատաստանը թող չուշանայ...:


ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 16

Տէրը անոնց հետ է,
որոնք իր Հոգիով են հրագինուած:
Տէրը անոնց հետ է,
որոնք զինք կը խոստովանին որպէս Ազատարարը ամենատեսակ ջրհեղեղներէն:
Տէրը անոնց հետ է,
որոնք չեն գոռոզանար:
Տէրը անոնց հետ է,
որոնք իրենք զիրենք ոչ ոքէ չեն գերադասեր:
Տէրը անոնց հետ է,
որոնք անմարդկայնութեան չեն յանձնուիր:
Տէրը անոնց հետ է,
որոնք իրաւունքի եւ արդարութեան դռներուն բացուիլը ի սրտէ կը փափաքին:
Տէրը անոնց հետ է,
որոնք գիտեն ժայռէն զինք փառաբանող սրբարաններ կերտել:
Տէրը անոնց հետ է,
որոնք ոչ միայն իրենց սեփական, նաեւ բոլոր զոհերուն համար կը սգան:
Արդարեւ, ան չի ննջեր եւ չի քնանար,
այլ յաւերժարթուն զգաստացնողն է, իմաստնացնողն է,
պահապանն է, եւ Աջակիցն է անոնց:



ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 17

Մարդասէր, իրենց սարերուն պէս կանգուն արիներուն լեռնաստանն է այս,
որ բազմադարեան աղէտներէն ետք՝
դեռ աներկմտօրէն բարութեանդ կ'ապաւինի, կը յուսայ, եւ կը սիրէ զայն:
Պատերազմը մահուան խրախճանքն է,
ուստի զգուելի է անոնց համար,
որովհետեւ զանոնք որդեգրած ես կեանքին համար,
գոհաբան սրտով անոր տօնը կատարելու յաւերժ:
Անոնց հոգիները դառնութիւններէ չյափշտակուին,
կատաղութեան անսպառ հնոցներու չփոխուին անոնք,
անոնց գիտակցութիւնն ու խիղճը չմատնուին քեզմէ օտարման,
եւ մարդկայնութենէ զրկուելու փորձութեան մէջ չիյնան անոնք:
զանոնք ազատէ չարին թակարդներէն, եւ իշխանութենէն,
եւ վերակենդանացուր գթութեամբդ,
որպէսզի բուռ մը քարքարոտ հողը
օրհնութիւններով մշակուի,
ըլլայ քեզի հաճելի պտղաստան վայելուչ:
Իրենց սարերուն պէս
Բարձրեալիդ առջեւ երկրպագող արիներուն լեռնաստանն է այս,
Մարդասէր:



ՍԱՂՄՈՍ ԹԻՒ 18

Մահուան սոսկալի օրերու այս գիշերն ալ պիտի երթայ,
սակայն դիմանալ է պէտք մինչեւ լուսաբաց...

Դուն, Տէր, որ հակառակ զգացումին՝ թէ բացակայ ես երբեմն,
երբեք չես լքեր Որդիիդ ընտրեալները,
որոնք ճշմարտութեամբ կը խոստովանին Անունդ,
այլ զանոնք կ'ազատես եւ կը փրկես:

Հետն ես անոնց,

նոյնիսկ երբ մահուան ստուերներէն կ'անցնին,

եւ զանոնք կը վերահաստատես յաղթանակիդ լուսաբացին եւ ցերեկին մէջ:

Իրաւ է, Տէր, որ ոչ թէ միայն ծախորդ օրերը կու գան ու կ'երթան,

այլ նաեւ՝ ձմեռանման աղէտալից օրերը:

Ճշմարիտ է, որ պէտք չէ վիատիլ,

որովհետեւ վերջ կ'ունենան ամեն նեղութիւն եւ փորձութիւն:

Եւ ստոյգ է, Տէր,

որ ոչ թէ միայն անկիրթ կամ բարբարոս ցեղերը կու գան ու կ'երթան,

այլ նաեւ քաղաքակրթութիւնով աւելի չարագործ դարձած անոնց սերունդները:

Ահա կը սպասենք լուսաբացը...:

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 19

Տէր, Լոյս մեր եւ Կեանք,
ինչպէս է, որ խաւարը հակառակ քեզմէ փախչելուն՝
դեռ անդադար մահ կը սփռէ բոլոր անոնց վրայ,
որոնք Տունդ կ'երթային ցնծութեան եւ ուրախութեան կանչերով,
եւ այսօր ալ, նոյնիսկ սուգի այս օրերուն,
Տունդ կ'երթան փառքիդ հարսանիքին համար:
Ուրեմն, իրապէս չէ՞ փախչած ան,
որ ընդդէմ քեզի իր հակառակամարտութիւնը սաստկացուցած է...
եւ կը շարունակէ Կայէնները արձակել Աբէլներուն վրայ:
Ճշմարիտ է, Տէր,
թէ ուր որ ես Դուն՝ խաւարը այնտեղ չի կրնար ըլլալ:
Արդեօք խաւարին ձգած ես այս տեղը, եւ եթէ այդպէս է,
ապա արեւը ինչո՞ւ կը պատմէ ներկայութիւնդ,
նոյնիսկ ամպամած եւ փոթորկոտ գիշերներուն մէջ:
Միթէ տկամր ես այնքան, որ մարդիկ տառապանքներով, վիշտերով կ'աղաղակեն.
ապա ինչո՞ւ տիեզերքը զօրութեանդ մասին կը վկայէ:
Կամ արդեօք քու երկայնամտութիւնդ
յափտենականութեանդ շունչով միայն կը գործէ...
Բայց, Տէր, ո՞վ է այն մարդը կամ ժողովուրդը,
որ կրնայ ի սպառ համբերել...
Տէր, Դուն ես մեր փրկիչը,
քեզի կ'ապաւինինք, քեզի կը յուսանք մենք,
ուստի մի՛ ձգեր, որ Աբէլները Կայէններու փոխուին,
մի՛ ձգեր, որ լոյսի որդիները խաւարի որդիներուն փոխուին,
մի՛ ձգեր, որ փառքիդ հարսնետորները չարին խրախճանաւորներու փոխուին:
Արդ, ձեռքովդ ոչ թէ միայն վտարէ չարագործներն ու չարը,
այլ նաեւ համասփիռ Լոյսիդ եւ Կեանքիդ յաւերժական երկրին վերածէ
Որդիդ սիրահար այս երկիրը սրբութիւններու:

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 20

Այո, Տէր, արարածներուդ մարդկայնութեան կորուստին կը հետեւի
խելագարեցնող պատրանքը բարիէ ու չարէ անդինին...
Սեփական ձեռքով սպանութիւնդ յայտարարող էակը
պիտի անդրադառնար, թէ ինքզինքն է, որ սպաննած էր:
Սակայն պիտի չկարենար դուրս ելլել պատրանքէն,
որովհետեւ աստուածներու պէս ըլլալու
իր անսպառ ցանկութիւնը գերեվարած էր զինք,
պղտորած գիտակցութիւնն ու զգայարանքները,
եւ յանձնապաստանութեան վիհերուն մէջ նետած...
Սա պատերազմն է բարիի ու չարի _
Տէր, պիտի ըսէի՝ չարի պատերազմն է ընդդէմ բարիի,
եւ բարիի մարտնչումը
վասն մշտանոր ճանապարհիդ մէջ հետդ լինելութեան,
վասն կեանքի պարգեւիդ համար գոհաբանութեան,
վասն ճշմարտութեան բարձրանալուն,
վասն երկնատուր պատուիրաններուդ,
որոնք պիտի չանցնին՝ նոյնիսկ երբ երկինքն ու երկիրը անցնին,
եւ վասն բուռ մը հողին՝
որ Սրբութեանդ յուշարար մատուռներ եւ եկեղեցիներ քեզ կը փառաբանեն...
Տէր, ահա խաչակիր արիները երկիւղովդ զգեստաւորուած են,
եւ անոնք բարին կը չոկեն չարէն,
քանի որ անոնց իմաստութեան հիմքերը
հաստատուած են անսասան Վէմին վրայ, որ յերկինս է:
Թող չարը գայ հազար դէմքով,
թող չարը գայ փոթորիկներու պէս, եւ
թող չարը գայ նման հեղեղներու,
սակայն, Տէր, յաղթանակը քուկդ է,
որովհետեւ Դուն բարիին համար սահմանեցիր ստեղծագործութիւնդ:

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 21

Ով Ողորմութիւն,
Դուն գիտես իւրաքանչիւր արարածի,
եւ իւրաքանչիւր ժողովուրդի անցեալը, ներկան ու ապագան.
Դուն գիտես անոնց առաքինութիւնները,
գիտես նաեւ անոնց յանցանքներն ու մեղքերը:
Երբ անհատներու եւ ժողովուրդներու հոգիներուն մէջ արթնայ
չարին հանդէպ ատելութիւնը,
եւ անոր ուռկանին մէջ ինկածներուն ցաւերն ու վիշտերը զանոնք տանջեն,
ապա նուազագոյն առաքինութիւններուն համար իսկ՝
ներէ եւ արծակէ զանոնք իրենց յանցանքներէն եւ մեղքերէն,
եւ երբեք թոյլ մի՛ տար, որ անոնք արբենան այլոց ցաւերով ու վիշտերով:
Տեսնելով հանդերձ թէ չարագործութեան կիրքէն յափշտակեալները
ոչ թէ միայն կ'ոտնակոխեն ամէն իրաւունք եւ արդարութիւն,
այլ նաեւ կը սպաննեն,
տուր հաւատարիմներուդ ներքին զօրութիւնը՝ անոնց համար բարին բաղձալու,
որովհետեւ Դուն յանցաւորներուն եւ մեղաւորներուն մահը չես ուզեր,
այլ անոնց դարձը.
թող անոնք բարի ապագայի արժանի ըլլան:
Որդիիդ առաքելութեամբ յայտնած էիր,
թէ չարին թագաւորութիւնը բաժնուած է
եւ չի կրնար կանգուն մնալ...
Իսկ մինչեւ անոր վախճանական կործանումը, Ողորմած Տէր,
ժողովուրդդ պահէ ու պահպանէ,
եւ չարէն ստրկացեալները ազատէ իրենց մահատարփ մոլորութենէն,
որպէսզի Արքայութիւնդ տիրէ,
ինչպէս երկնքի մէջ, նոյնպէս՝ երկրի վրայ:




ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 22

Տէր, Դուն ի սկզբանէ ընտրեցիր այս ժողովուրդը,
որ Քրիստոսի միջոցով քեզի յուսացողներէն առաջինը ըլլայ,
ու պատկանի քեզի՝ մինչեւ ժամանակներուն լրումը,
երբ ծրագիրդ պիտի ամբողջանայ
եւ Նոր Երկինքն ու Նոր Երկիրը պիտի հաստատուին:
Չայն ընտրեցիր,
որովհետեւ ան իր հոգեւոր ուղեւորութեան մէջ
մօտեցած էր քեզի՝ մերձեցողիդ:
Ո՛վ կրնայ յուսալ քեզի՝
եթէ Դուն անոր չմերձենաս նախ.
հր ժողովուրդը կրնայ յուսալ քեզի՝
եթէ Դուն չառնես սկզբնաքայլը անոր մերձենալու...
Իսկ Դուն էրբ է, որ չես մերձեցած
թէ անհատներուն եւ թէ ժողովուրդներուն,
ով յաւերժական Մերձաւոր:
Սակայն քու մերձաւորութիւնդ կոյրերը ինչպէ՛ս տեսնեն,
իսկ բժաւոր աչքերն ալ
ինչպէ՛ս հարազատօրէն ճանչնան ներկայութեանդ ճշմարտութիւնը,
որմէ կը բխի կենդանարար յոյսին գետը:
Արդ, ի սկզբանէ Դուն ես այս ժողովուրդի յոյսին Տէրը.
յոյսին՝ որ սուղ շնորհ մըն է, ինչպէս բոլոր շնորհները՝
որ բաշխած ես ու կը բաշխես քեզի մօտեցողներուն:
Անիկա յոյս է խաչի ճանապարհի մը,
որ իր չարչարանքներով, տառապանքներով եւ մահուամբ հանդերձ՝
կորուստի ահազանգ չէ, այլ կեանքի բարի լուր:

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 23

Տէր, ողորմէ՛
որովհետեւ Դուն յերկինս Հայրաբար ես,
եւ ստեղծագործութիւնդ խնամելով՝
կը տիրես աներեւոյթ եւ երեւելի գոյակներուն:
Տէր, ողորմէ՛
որովհետեւ Դո՛ւն ես Սուրբը, որուն Անունն է Սէր:
Տէր, ողորմէ՛
որովհետեւ Դո՛ւն ես Արքայութիւնը, որ էր, է եւ պիտի ըլլայ:
Տէր, ողորմէ՛
որովհետեւ քո՛ւկդ է ամենակալ Կամքը:
Տէր, ողորմէ՛
որովհետեւ Դուն հանապազորդ կը մատակարարես
թէ՛ մարմինը սնուցանող հացը,
եւ թէ՛ հացը հոգին սնուցանող:
Տէր, ողորմէ՛
որովհետեւ Դուն կատարելապէս կը ճանչնաս
արարածներուդ տկարութիւնները
եւ Ծնողաբար ներելով կ'արձակես զանոնք,
եւ անոնց կը շնորհես առաքինութիւնը ըլլալու ծնողներ ներման:
Տէր, ողորմէ՛
որովհետեւ թէպէտ Հոգիդ
քեզի վստահողները, քեզի յուսացողները, քեզ սիրողները
կը տանի փորձութեան անապատ,
սակայն չի լքեր, այլ անոնց հաւատքը, յոյսը եւ սէրը նորոգելով՝
կը փրկէ չարէն եւ առաւել կը հաստատէ Կեանքին մէջ:
Տէր, ողորմէ՛
որովհետեւ քուկդ է Արքայութիւնը, Զօրութիւնը եւ Փառքը.
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:



ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 24

Վայ մեզի, Տէր, վայ մեզի:

Վայ մեզի, քանզի մինչ կը սպասէինք յաղթական ցնծութիւններ՝
հոգեսասան վիշտի օրեր հասան մեզի,

եւ վերստին անպատմելի նեղութիւններ մեզ գտան:

Վայ մեզի՝ որ պատմութիւնը, ուստի նաեւ ներկան աղաւաղեցինք յայտարարելով,
թէ Նոր Աւարայր եւ Նոր Սարդարապատ պիտի կերտենք:

Վայ մեզի՝ որ ամպագորգոր յոխորտացինք:

Վայ մեզի՝ որ հայրենի երկրին կեանքը արծարծող երիտասարդ շունչերը
բարբարոսաբար մարեցան:

Եւ մեծեր ու փոքրեր վտարանդի դարձան ստամբակներու ձեռամբ:

Վայ մեզի՝ որ արթնութիւնը եւ զգաստութիւնը մերժեցինք:

Վայ մեզի՝ որ ինքնասրբագրումի ուղին չընտրեցինք:

Վայ մեզի՝ որ յաւակնեցանք գողիաթներուն լեզուները հասկնալ,
երբ իրարու լեզուն չէինք հասկնար:

Վայ մեզի՝ որ թէ՛ անհատաբար, եւ թէ՛ ազգովին

խաբէութիւններով օրօրեցինք մեր ժամանակը:

Վայ մեզի՝ որ մեր անգիտութիւնը իբրեւ գիտութիւն ցուցադրեցինք,
եւ աստուածապարզեւ մեր տաղանդները չկամեցանք ժողովել,

այլ անիմաստասիրաբար զանոնք վանեցինք:

Վայ մեզի՝ որ արիացեալներու արեամբ յաղթանակները
սեփականացուցինք եւ չարաշահեցինք,

իսկ պարտութիւններուն պատասխանատուութիւնը

ուրիշներու վրայ նետեցինք:

Վայ մեզի, Տէր, վայ մեզի...

Բայց Դուն չես լքեր այս ժողովուրդը.

բոլոր աղէտներէն վերջ՝

վերստին վերականգնած ես ու պիտի վերականգնես:

Ճշմարիտ է, Տէր,

թէ այս ծառը չէ չորցած, ու դեռ ծիլեր պիտի արձակէ...:



ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 25

Տէր Սիրոյ արքայութեան, որ ի սկզբանէ կ'ըսես՝ «Եղիցի լոյս»,
որ ծագումնարանն ես ողորմութեան եւ գութին եւ կարեկցութեան եւ արդարութեան,
Դուն որ մարդկութիւնը արարեցիր վասն տիեզերական ընկերակցութեան,
ուր իւրաքանչիւր ոք եւ իւրաքանչիւր ազն եւ իւրաքանչիւր ազգ՝
այլ ոք, այլ ազն եւ ազգ այլ տեսնէ որպէս իր ապրելուն եւ լրման բարի կարելիութիւնը,
իմանայ ընդհանրական փոխ-կախումնաւորութեան շնորհը,
բայց բոլոր ժամանակներուն մէջ
երկնային բարձունքէդ տեսնելով երկրիդ մէջ հեղեղուող աստելութիւնները,
արեան գետերը, եւ իրաւագրկումները եւ ապականումն ու քանդումը ամենայնի,
լացիր այնպէս՝ ինչպէս Որդիդ Երուսաղէմի վրայ,
որ զարդարած էիր բնակութեանդ համար,
որ զարդարուած էր բնակութեամբդ,
իսկ անիկա հակած էր խաւարին,
եւ չէր դադրեր անձնասպան կամակորութենէն:
Ի՞նչ ընել, Տէր, երբ դուն «վայեր»ով կու լսա այսօր ալ:
Ի՞նչ ընել, Տէր, երբ արքայութիւնդ կը փակուի յոյսերուն առջեւ այսօր ալ:
Ի՞նչ ընել, Տէր, երբ քեզ կանչելով կը յափշտակեն իրաւագրկեալները այսօր ալ:
Ի՞նչ ընել, Տէր, երբ նախորդներէն աւելի
դժոխքին արժանի նմանակներ կը ծնին այսօր ալ:



Ինչ ընել, Տէր, երբ ոսկիները կը նախընտրուին

քան մարդ ըլլալու սրբութիւնները այսօր ալ:

Ինչ ընել, Տէր, երբ սպանութիւնները փրկարար զոհեր կ'ընկալուին այսօր ալ:

Ինչ ընել, Տէր, երբ կեղծաւորութիւնն է իշխանութիւնը այսօր ալ:

Ինչ ընել, Տէր...

Եւ եթէ այսպէս համարձակիմ ըստ Որդիիդ ողբալու՝

պիտի տեսնեմ վախճանական աւերումը արարչութեանդ:

Մի՛ լքեր մեզ, Տէր, յուսահատութեան հովիտներուն մէջ,

այլ տո՛ր մեզի հաւատարմութիւնը

նմանելու իմաստուն ծառաներուդ եւ աղախիններուդ,

որոնք ճիշդ ատենին մատակարարեցին եւ կը մատակարարեն

մարդասիրութեանդ լոյսը, ողորմութիւնը, գութը, կարեկցութիւնը եւ արդարութիւնը:

Մի՛ լքեր մեզ, Տէր, յուսահատութեան հովիտներուն մէջ,

այլ տո՛ր մեզի յանձնառութիւնը քեզմէ օրհնեալներուն,

որոնք խոնարհներուն հասնելով՝ քեզի են հասած եւ կը հասնին:

Մի՛ լքեր մեզ, Տէր, յուսահատութեան հովիտներուն մէջ...

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 26

Ան որ ի սպառ կը համբերե՛՛ ան պիտի ապրի,
Կ'ըսէ Հօրդ Իմաստութիւնը՝ Յիսուս, մեր Տէրը՝
որ համբերեց չարակամութեան, ուրացումին,
չարչարանքներուն ու խաչին վրայ մահուան:
Ի սպառ համբերեց...

Սակայն մենք մեր խուճապին մէջ կը մոռնանք զայն,
որովհետեւ հաճելի հանգստութիւն մըն է մոռնալը:
Իսկ թոյլ կու տամ, Յաւիտենական, որ ժպրհելով հարցնեմ,
թէ ի՞նչ կրնայ ի սպառ համբերել՝

երբ զուրկ է գալիքին կանխատեսութենէն:

Ո՞վ կրնայ ի սպառ համբերել՝

երբ չունի կարողութիւնը կացութիւններուն մէջ ինքզինք հակակշռելու,
ալ ուր մնաց՝ զանոնք հակակշռելու:

Ո՞վ կրնայ համբերել՝

երբ տարատեսակ փորձութիւնները կը խուժեն իր վրայ,
որ նման է նաւակին՝ հողմակոծ լիճին վրայ ալիքներով ողողուող:

Ո՞վ կրնայ ի սպառ համբերել՝

երբ գրեթէ ամէն ոռպէ իր յուզումները

ծծմբային անձրեւներու պէս կը թափին ներաշխարհի բոլոր տարածքներուն վրայ:

Ո՞վ կրնայ ի սպառ համբերել՝

երբ թէ՛ իր սեփական եւ թէ՛ լուսաւորեալներու

գաղափարները, միտքերն ու խորհուրդները

գրեթէ միշտ կը տատանին, կը սասանին եւ փոլ կու գան,

ինչպէս շէնքերն ու սրբութեան փոքր ու մեծ կոթողները:

Ո՞վ կրնայ ի սպառ համբերել՝

երբ նոյնիսկ կ'ընդունի իրականութիւնները որ չի կրնար փոխել,

եւ կ'ունենայ արիութիւնը փոխելու կրցածները՝

զանազանելով բարին ու չարը:

Ո՞վ կրնայ ի սպառ համբերել՝

երբ նոյնիսկ կասկածելի յստակատեսութեամբ մը կը խորհի՝ թէ անցած է անդին

քան բարիի ու չարի բրածոյացած բարոյականը:

Ո՞վ կրնայ համբերել...

Գեթսեմանիի կատարեալ լուրթեան մէջ,

այդ ինչպիսի՞ բարբառում մըն էր երկինքէդ,

որուն ի պատասխան՝ արինակայլակ քրտինքով ծառայ

ինքզինք յանձնեց Կամքիդ, եւ ըմպեց բաժակը որ իրեն մատուցեցիր...

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 27

Ատելութիւնը նախ զի՛ս թէ քեզ պիտի կործանէ,
ով Ադամի որդի կամ դուստր, իմ եղբայր կամ քոյր:
Եթէ ձեռամբդ իմ կործանումս կանխէ քու կործանումդ՝
պիտի ցնծաս աշխարհի երեսէն իմ անհետանալուս վրայ,
բայց ախտավարակ հոգիդ օր մը չէ օր մը քեզմէ պիտի խլէ ամէն ինչ,
եւ դուն արարքէդ անիծեալ
ինչ ալ մշակես՝ անբարեբերութիւն մը պիտի ըլլայ կեանքդ,
դուն աստանդական ու թափառական պիտի ըլլաս ներքին դեւերէն հալածուելով,
մինչեւ քեզ սպասող գերեզմանին բերանը...
Իսկ եթէ իմ ձեռամբ քու կործանումդ կանխէ իմ կործանումս՝
պիտի ցնծամ աշխարհի երեսէն քու անհետանալուդ վրայ,
բայց ախտավարակ հոգիս օր մը չէ օր մը ինձմէ պիտի խլէ ամէն ինչ,
եւ ես արարքէս անիծեալ
ինչ ալ մշակեմ՝ անբարեբերութիւն մը պիտի ըլլայ կեանքս,
ես աստանդական ու թափառական պիտի ըլլամ ներքին դեւերէն հալածուելով,
մինչեւ զիս սպասող գերեզմանին բերանը...
Քեզ ատելով՝ նոյն Կայէնն եմ ես, որ Տիրոջ ներկայութենէն դուրս էր.
Զիս ատելով՝ դուն նոյն Կայէնն ես, որ Տիրոջ ներկայութենէն դուրս էր:
Հոն՝ դուրսը մեզմէ ոչ ոք կը հասկնայ,
թէ ոեւէ մէկը՝ արին հեղելով
ո՛չ մարմնականօրէն եւ ոչ ալ հոգեկանօրէն պիտի մաքրուի,
պիտի չհասնի կեանքի բարութիւններուն վայելքին,
այլ իր ընթացքն ու գործերը մեռելական պիտի ըլլան,
ապականումի աստծոյն գերութեան մէջ:
Եկրոր Տէր,
ատելութեան մեր այս արքորավայրը
եւ քարեղէն սիրտերը ճմլէ
օրէնքներուն օրէնքով:

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 28

Ով սուրբ հայրապետ Հայաստանեայց աշխարհի,
մեր լուսաւորիչ՝ որ արթնութեամբ կը հսկես,
կը պատմուի՝ թէ Տէրունական խաչին զօրութենէն
սեւագունդ դեւերը փախչելու սկսան՝ բարձրաձայն գոչելով.
«Վայ մեզ, զի յամենայն երկրէ փախստական արար զմեզ Յիսուս՝
որդին Մարեմու դստերն մարդկան»:
Անոնք կը փախչէին իրենց ձեռամբ մեռեալներէն եւ կալանաւորներէն,
որովհետեւ առաքելութեամբդ անոնց շնորհուած էր քաջութիւնը
հասնելու Քրիստոսեան չափահասութեան:
Կը փախչէին, եւ չէին գիտեր՝ թէ ո՞ր,
քանի Տիրոջ փառքը կը լեցնէր տիեզերքը...
Եւ ծովսի մը պէս անոնք պակսեցան՝
մինչ կը տարածուէին փրկարար պատուիրանները եւ Աւետարանը,
ու ամէնքը իրենց յոյսը կը դնէին Աստուծոյ վրայ,
եւ յանձնառութեամբ կը խոստովանէին, ըսելով.
«Տէր Աստուած մեր՝ Դու ես»:
...Եւ սակայն քանի մարդիկ հակումը ունէին փորձութիւններուն՝
դեւերը յաւերժ չմնացին իրենց փախուստին մէջ,
այլ վերադարձան՝ ծովսի մը պէս թանձրանալով,
ըստ խօսքին՝ թէ անոնք մարդոց մէջէն ելլելով,
կ'երթան ու կը շրջին վայրեր անշրդի՝



գտնելու համար հանգիստ տեղեր,
եւ երբ չեն գտներ՝ կը վերադառնան իրենց նախկին տուները,
որ մաքրուած էին եւ յարդարուած,
եւ իւրաքանչիւրը իրեն հետ կը բերէ իրմէ աւելի չար եօթ ուրիշ ոգիներ,
ու անոնց հետ ներս մտնելով՝ կը բնակի,
եւ իրենցմով բնակեալ տուներուն վերջը նախկին վիճակէն աւելի գէշ կ'ըլլայ:
Դուն, հայրապետ,
որ տքնեցար միաբանութեան համար,
տեսար եւ կը տեսնես մեր պառակտումները:
Եւ քանի դուն չունիս այլ զօրութիւն քան անշէջ կանթեղը,
որ մեր մթնած երկինքէն կախեցիր,
կը շարունակես լոյս տալ դարերէ ասդին՝
ահերուն եւ վախերուն վրայ,
եւ կասկածոտները կը հրաւիրես մեղքի սեփական բաժնին գիտակցութեան,
որպէսզի սէրը վերադբերանայ սիրտէ սիրտ,
հաւատքը անսասանօրէն վերահաստատուի ընդհանուրի սրտերուն մէջ ,
եւ յոյսը վերավառելով դէպի ապագան նայի,
ապագան՝ որուն երկինքը եւս կանթեղդ ունի իբր Աստուծոյ պայծառ աչքը,
որ մեզի կը նայի ողորմութեամբ եւ գթութեամբ,
որպէսզի իւրաքանչիւր ոք իր լապտերին հետ առաքինութիւններուն իւրը չմոռնայ,
եւ մշտավառ լապտերներու բազմացող թափօրը միանայ փառաւոր պայծառութեան...

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 29

Նեղ է ճամբան, որ արքայութիւն կը տանի,
նեղ է անիկա՝
բայց ընդ Քրիստոսի ուղեւորին համար ճանապարհն է անիկա,
ուր քայլ առ քայլ ճշմարտութիւնը կը յայտնուի,
եւ ուր քայլ առ քայլ կեանքը կը գտնուի...
Մարաթոնեան վազքի պէտք չունիս դուն, ով մարդ,
հասնելու համար կոչումիդ լրումին, վասնզի
անիկա վազելու ասպարէզ մը չէ, որ դափնիով գուցէ զարդարուի,
անիկա բանականութեան ասպարէզ մը չէ, որ շքանշանով գուցէ զարդարուի,
անիկա հեւքի ասպարէզ մը չէ, որ պատիւներով գուցէ զարդարուի,
այլ ասպարէզ է շնորհին՝ որուն գինը կեանքն է որպէս ճշմարտութիւն եւ ճանապարհ:
Նեղ է ճամբան, որ արքայութիւնը կը խոնարհեցնէ այստեղ,
թշնամութիւններու ողբերգական մոլորակին վրայ,
որ խաւարի շահերուն համար կը սակարկէ եւ կը յափշտակէ,
որ խաւարի գործարքներուն համար ոճիրներ կը յղանայ
եւ կոտորածներով ու բնաջնջումներով կը գինովնայ,
որ խաւարի ցնորքներուն համար՝
դէպի վախճանական անձնասպանութիւն կ'աճապարէ:
Նեղ է ճամբան, որ կ'իմանայ երկիւղով,
թէ Տէրը արարչութեան հոն՝ բարձրագոյն երկնքին մէջ կու լայ
աղաւաղումին համար իր հողանիւթեայ պատկերին:
Բայց ան միայն հոն՝ բարձրագոյն երկնքին մէջ չէ, որ կու լայ,
անոր վիշտը դեռ կ'արիւնի բեւեռեալ իր Որդիի խաչէն,
ուրկէ բարբառն է ահաւոր պատմութեան մէջ եւ այս օրերուն վրայ՝
Հայր, ատոնց թող,
որովհետեւ չեն գիտեր, թէ ինչ կ'ընեն:
Նեղ է ճամբան, որ այս աղաղակին սրտակիցներունն է:
Վասն անոնց, եւ անոնցմով է՝
որ Դուն, Տէր, պիտի չլքես երագդ,
եւ անոնք քայլ առ քայլ պիտի յառաջանան նեղ ճամբուն մէջ,
որ հարազատապէս մարդ ըլլալու ճանապարհն է, ճշմարտութիւնն է, կեանքն է:

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 30

Տէր,

ա՛յս է արարածը, որ իր ձեռքին մէջ աղանին խեղդելով՝
խաղաղասիրութեան ջատագով կը ներկայանայ...

Իր խաղաղասիրութիւնը ատելութիւնն է,

իր խաղաղասիրութիւնը բրտութիւնն է,

իր խաղաղասիրութիւնը սո՛՛ւն է եւ ոճիրը:

Այս՝ հակա-պատկերդ է,

գերին՝ վրէժխնդրութեան մոլուցքին,

զոր կը կրէր դարերէ եւ դարերէ ասդին՝ իր վաղագոյն օրերէն...:

Ինչպէ՛ս էր, որ ան չարագործութեան ախոյեան մը դարձաւ,

անոր մանկութիւնը ատելութիւնը ունէր դաստիարակ,

նաեւ՝ բրտութիւնը, սովը եւ ոճիրը:

Անոր ինքնաքննութիւնը կը յաճախուէր, կը յաճախուի,

եւ պիտի յաճախուի նոյն դաստիարակին մշակոյթէն:

Ո՞ր զօրութիւնն է կարող զայն դարմանելու.

նմանակելով զայն հակազդելը՝

ատելութեան նոյն յոռի շրջանակին մէջ դառնալ է,

նմանակելով զայն հակազդելը՝

բրտութեան նոյն յոռի շրջանակին մէջ դառնալ է,

նմանակելով զայն հակազդելը՝

սովարարութեան եւ ոճիրի նոյն յոռի շրջանակին մէջ դառնալ է...:

Տէր, ողորմութեամբդ խորտակէ շրջանակները յոռի:

...Գուցէ այնքան մը ազատ կամք պէտք չէ շնորհէիր մեզի,

յանդգնութիւն մըն էր այդ արարքդ,

որուն համար ետքը զղջացիր եւ ըսիր,

թէ արարածիդ սիրտը մանկութենէն չարին կը հակի:

Մեղա՛յ, Տէր, քու շնորհներդ քու ներկայութիւնդ են,

հանդիպումը՝ ներկայութեանդ,

եւ քեզի հանդիպող կամքն է, որ ազատ է,

իսկ կամքը որ քու առջեւ խոնարհիլ չի սորվիր՝

անազատութեան թշուառութիւնն է:

Տէր, մեզմէ իւրաքանչիւրին սորվեցուր խաւարը չանիծել:

Տէր, մեզմէ իւրաքանչիւրին սորվեցուր մոմ մը վառել խաւարին մէջ,

որ ողորմութիւնդ ներգործէ

վասն իրաւ խաղաղասիրութեան յայտնակերպումին:



ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 31

Դեսմընդ Արք. Թուֆուփ յիշատակին

Անմարդկային այս ճմեռն ալ պիտի անցնի,
որովհետեւ, Տէր, քու երագդ մարդոց խոտորումներուն չ'ենթարկուիր:
Դուն որ Տէրն ես բովանդակին եւ կ'իշխես ժամանակներուն վրայ,
եւ ի սկզբանէ գիտէիր ,
թէ արարածդ պիտի հակի չարին եւ նմանակէ զայն,
չհրաժարեցար արարելէդ,
քանի Սէրն ես Դուն՝ որ փառքէն կը խոնարհի ինքնագոհողութեամբ,
եւ կ'արարէ ու կը խնամէ իր Խօսքով գոյառեալը:
Այս ճմեռն ալ պիտի անցնի, Տէր,
որովհետեւ քու երագդ ցնորք մը չէ,
այլ Սիրոյդ տեսիլքը, տեսիլք մը՝ ո'չ թէ ցանկալի,
այլ այնպիսին՝ որ կը գործէ իբր ծրագիր յափտեանները պարագրկող:
Այս ճմեռն ալ պիտի անցնի, Տէր,
որովհետեւ հաւատացիր, թէ
բանականը որ նմանելու զօրութեամբ օժտեցիր
գիտնալով հանդերձ, թէ ան չարին հակմամբ եւ նմանակումով՝
պարգեւդ անմարդկային ուժի պիտի փոխէր
պիտի զգաստանայ, եւ նոյնիսկ հասնի արթնագիտակցութեան ու նմանի քեզի:



...Բայց, Տէր, ինչպէս ընդունիլ վերքերը կորուստներուն եւ աղէտներուն,
ինչպէս ապրիլ անոնց հետ եւ բոլոր չարիքներուն՝ որոնք չեն դադրիր խուժել,
ինչպէս չսոսկալ հեռապատկերէն՝
թէ տիեզերական անձնասպանութիւն մը հետզհետէ անխուսափելի կը դառնայ:
Միայն շնորհդ է, որ կ'իմանայ,
թէ այս հարցումներուն համար կանգնեցիր Նշանը Խաչին,
որ յանցագործներուն յիշեցնէ, թէ իրենք
նոյնքան տուժեցեալներ, իրաւագրկեալներ, մահացու վիրաւորեալներ են՝
որքան իրենց անարդարութեան թիրախները,
եւ որոնց անմարդկայնացուիլը իրենց ձեռամբ՝
իրենց իսկ անմարդկայնացումն է:
Անիկա նաեւ Նշանն է շնորհիդ՝ ծնանող երազիդ ծառաներ,
որոնցմով պիտի տարածես ջերմ հովը
անբանութեան սառնամանիքը հալածող...:
Այս ձմեռն ալ պիտի անցնի, Տէր:

ՍԱՂՄՈՍ ԹԻՒ 32

Անկասկած, մահացու մեղքերու ցանկը անելի է քան եօթն:
Միտքը խորհրդանշական թիւի մը մէջ ցանկագրելով՝
կարծեր է լուծել խնդիրին անչափելիութիւնը,
ու մնացեալն ալ ձգած է «եւ մասամբք նոցին»ին ուսերուն:
Եւ ահա կ'աւելցուէր արտաքոյ կարգի ութերորդ մը՝
որ անտարբերութիւնն է:

...Այնուհանդերձ, ճշմարիտ է, թէ
հպարտութիւնը մահացու է, նախանձը՝ մահացու,
բարկութիւնը մահացու է, ծուլութիւնը՝ մահացու,
ագահութիւնը մահացու է, որկրամոլութիւնը՝ մահացու,
եւ մահացու է բղջախոհութիւնը:

Թէ՛ ասոնք եւ թէ՛ բոլոր մեղքերը մահացու են:

Յիսուս կոչ կ'ուղղէ, ըսելով.

Փրկութեան ժամանակը հասած է

եւ եկած՝ Աստուծոյ արքայութիւնը.

ապաշխարեցէք եւ հաւատացէք Աւետարանին...:

Կ'ըսէ՛ որովհետեւ բոլոր մեղքերն ալ մերժումն են արքայութեան:

Անոնք ոչ միայն մերժումն են արքայութեան,

այլեւ մերժումն են ներքին ներդաշնակութեան եւ խաղաղութեան:

Տէր, արքայութիւնդ մերժելով՝ ապստամբն եմ ընդդէմ Հայրութեանդ:

Տէր, արքայութիւնդ մերժելով՝

հրաժարեալն եմ իմ ներքին ներդաշնակութենէն ու խաղաղութենէն:

Իսկ անտարբերութիւնը՝ թուարկեալ մահացու մեղքերէն

եւ չթուարկեալ մահացու մեղքերէն կը սնանի, ինչպէս նաեւ զանոնք կը սնուցանէ:

Անիկա տարբերակում մըն է հպարտութեան.

տարբերակում մը՝ նախանձի.

տարբերակում մը՝ բարկութեան.

տարբերակում մը՝ ծուլութեան.

տարբերակում մը՝ ագահութեան.

տարբերակում մը՝ որկրամոլութեան.

տարբերակում մը՝ բղջախոհութեան.

տարբերակում մը՝ բոլոր չթուարկեալներուն.

որովհետեւ բոլորն ալ բարոյական ոչինչէն են,

եւ կը բերեն ոչինչը...

Տէր, Ողորմէ՛:

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 33

Դուն, Տէր, առաջին Լոյսն ես.

Դուն, Տէր, արդար արեգակն ես.

Դուն, Տէր, բարութեան աղբիւրն ես.

Դուն Լոյսն ես, որ գերագոյն ներդաշնակութիւնն է լուսաստեղծ,

որ հայոց մթնաձ եւ մթնելի երկինքերէն

կախեցիր Լոյսիդ նմանութիւն Կանթեղը Լուսաւորչի,

որ լոյս տայ՝ միշտ մնալով անշէջ,

որովհետեւ՝ ո՛չ որեւէ ամբարիշտ ձեռք հոն կը հասնի, եւ ո՛չ ալ՝ վիշապը:

Անիկա լոյս տուաւ երկար դարեր,

անիկա լոյս կու տայ այսօր եւ լոյս պիտի տայ վաղը:

Բայց, Տէր, ճմլէ քարեղէն սիրտերը եւ աչքերն ալ բաց՝ որ տեսնեն անոր լոյսը.

Վանէ չարին աջակցութիւնը կամ ծախակցութիւնը,

կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ մոլորումները:

Եւ շնորհէ որ սիրտերն ու աչքերը հասկնան,

թէ Կանթեղը անմար է ողորմութեամբդ եւ սուրբին արցունքներով

արցունքներ՝ որ Հայրական արցունքներդ կը թարգմանեն...:

Ահեր ու վախեր անցան, եւ անիկա դեռ լոյս կը սփռէ:

Թոյլերն ու կասկածոտները անցան, եւ անիկա դեռ լոյս կը սփռէ:

Ահեր ու վախեր պիտի գան վաղը, եւ անիկա դեռ լոյս պիտի սփռէ:

Թոյլեր եւ կասկածոտներ պիտի գան, եւ անիկա դեռ լոյս պիտի սփռէ:

Դուն՝ Լոյս,

յուսազուրկներու ամբոխ մը չկամեցար,

երբ ընտրեցիր այս ժողովուրդը,

այլ կամեցար՝ որ ան ըլլայ ազգ կանթեղներու,

ու մեր եւ համամարդկային մթնաձ եւ մթնելի երկինքներէն լոյս տայ,

կամեցար որ ան իր երկինքներէն կախուած Կանթեղը տեսնէ, աշակերտի անոր,

եւ յանձնառութեան վառ յոյսերով

վասն վերանորոգուող կեանքի ճառագայթ,

կեանքի՝ որ արդարութեան արեգակին կը նմանի,

արեգակին նմանելով՝ բարութեան աղբիւրին կը նմանի,

աղբիւրին նմանելով՝ Լոյսիդ կը նմանի:

Եւ դուն՝ Կանթեղ Լուսաւորչի, որ ինչպէս Տիրոջ աչքը կը հսկես,

պիտի տեսնես թափօրը կանթեղներու ազգին,

եւ մխիթարուիս...:

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 34

Անսկիզբն Աստուած,
որ անճատելի Լոյսն ես համասփիռ,
ողորմութեամբդ կը ծագեցնես քեզ ճանչնալու Լոյսը,
Որդին՝ որուն դէմքը տեսնելով սերունդներ քեզ տեսան եւ կը տեսնեն,
եւ օրինաբանելով եղանակեցին եւ կ'եղանակեն՝ «Աստուած հարցն մերոց»:
Ողորմութեամբդ կը փչես վառ յոյսին Լոյսը,
Ս. Հոգին՝ որ սերունդներ առաջնորդեց եւ կ'առաջնորդէ:
Խաաարին մէջ ինչ շնորհ էր եւ է Որդիիդ խոնարհիլը եւ ընդ մարդկան բնակիլը:
քարոզելը, ուսուցանելը, բժշկագործելն ու հրաշագործելը,
եւ անոր Խաչն ու յարութիւնը:
Անգիտութեան մէջ ինչ շնորհ էր եւ է Ս. Հոգիիդ գալը մխիթարելու,
եւ անոր Սէրը՝ որպէս քու եւ Որդիիդ ներկայութեան յայտնիչ,
Երրորդութեանդ տեսիլք, ձայն եւ հրաւեր խաղաղութեան,
պատուէր ի սրտէ ողջունող մերձեցումի, միաբանութեան:
Եւ այն խաղաղութիւնն էր, այն փոխադարձ ողջոյնն էր, այն միաբանութիւնն էր,
որ մեր մէջ հոգիի, սրտի, մտքի
եւ ընդդիմամարտ չարին յաղթող սերունդներու ծնունդ տուաւ:
Այսօր ալ ծնունդ կու տայ՝ ի փառս Երկնքիդ:
Իսկ դուն, աղաւաղեալ ժողովուրդ, որ չես դադրիր դեւեր հնարելէ,
առանց անդրադառնալու՝ թէ իրաւ դեւերը քու հոգեկանիդ մէջն են:
Ե՞րբ պիտի դուրս գաս խաւարէն ու անգիտութենէն,
որուն սովոր ես ինքզինքդ մատնել,
եւ ըստ նմանութեան Արարիչիդ՝ սիրով ստեղծել.
արդէն սէրը ստեղծող է, որ կ'արարէ քեզ նոր:
Ե՞րբ պիտի դուրս գաս խաւարէն ու անգիտութենէն,
որուն սովոր ես ինքզինքդ մատնել,
եւ ըստ նմանութեան Էմմանուէլին՝ մշակակից ըլլալ արքայութեան,
վասնզի այն մշակակցութիւնն է,
որ չարչարանքներէն, խաչելութիւններէն եւ մահերէն վերջ՝ պիտի կանգնէ քեզ նոր:
Ե՞րբ պիտի դուրս գաս խաւարէն ու անգիտութենէն,
որուն սովոր ես ինքզինքդ մատնել,
եւ ըստ նմանութեան Շունչին՝ մատակարարել կենդանութիւն,
վասնզի այն մատակարարումն է, որ կը շնչաւորէ քեզ նոր:
Անսկիզբն Աստուած՝ Հայրդ է, որ չի մեռնիր,
այլ ապագայէն քեզի կու գայ Որդիին եւ Ս. Հոգիին հետ միասին,
որպէսզի շնչաւորուելով, որդիանալով, հայրանալով մատչիս Իրեն:
Դուն յաւերժութեան ընտրեալ մըն ես: Արժանի եղիր:

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 35

Հոգի Տեառն, երբ թոհուբոհն էր,
Դուն կը շրջէիր ջուրերուն վրայ:
Արարչական իւրաքանչիւր «Եղիցի»ն բարբառուեցաւ քեզմով:
...Քեզմով էր՝ որ հողանիւթը շնչաւորուեցաւ աստուածային պատկերով,
Եւ զօրութեամբ՝ նմանելու աստուածայինին:
Բայց պատրանքներ՝ զօրութիւնը այլասերեցին ուժի ցանկութեան,
որ նմանումին յանձնուիլն էր պատրանքներուն, Եւ մոլորիլը անոնց մէջ:
Եւ ամօթը, Եւ ջքմեղանքը, Եւ ոճիրները մտան ու տարածուեցան
բոլոր ժամանակներուն մէջ:
Իսկ դուն խօսեցար վասն հարազատ լինելութեան վերագիտին.
Խօսեցար Օրէնքով, մարգարէներով, Բաւտարաններով,
թէ անոնց՝ որոնք իրենց ականջները խոնարհեցուցին ունկնդրելու զանոնք,
Եւ թէ անոնց՝ որոնք թէեւ չլսեցին,
բայց կատարելով ներքին ճանապարհորդութիւններ՝
օտար չմնացին աստուածայինին:
...Հոգի Տեառն, անճառելի մանկավարժութեամբ մը
քեզի համար պատրաստցիր նաեւ Հայաստանեայց ունկնդրութիւններ,
Եւ երբ անոնք հասու եղան խոնարհելու
մեծ մարգարէին պատուիրաններուն, տեսանողական պատգամներուն,
Եւ Էակիցիդ Բարի լուրին,
արտորանքով ընդառաջեցին ճաշակելու
Եւ ըմպելու բարբառիդ յարուցանող զօրութիւնը,
որով քար առ քար, ցօղ առ ցօղ, ամպ առ ամպ
կառուցին մեր հոգիներուն ծննդավայրը,
որ Երկնքին նմանութիւնն էր հայոց երկրին վրայ:
Անոր Բաւտարանէն հոսեցաւ
գետակը հաւատքի Եւ յոյսի, բարեսիրութեան,
իմացութեան, արդարութեան ու արիութեան:
Եւ գետակը անցաւ
դարերու փորձութիւններուն, արհաւիրքներուն Եւ աղէտներուն մէջէն:
Հոգի Տեառն, Դուն գետակին հոսքը պահելով՝
մաքրամաքրեցիր ժամանակներուն տիղմերը Եւ կը մաքրամաքրես,
որոհետեւ չես մոռնար լինելութեան մեր հայրերուն յանձնառութիւնները,
Եւ չես անտեսեր այժմեան աշակերտութիւնը անոնց:
Գետակը շնորհներուն որեւէ թոհուբոհէ չի նուաճուիր,
այլ քեզմէ մխիթարուելով՝ միշտ կը դիմէ Աննմանին, նմանելու Անոր:
Հոգի Տեառն, քեզմով կը բարբառուին արարչական «Եղիցի»ները...

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 36

...Եւ մենք որ աղէտներուն Աղէտէն վերջ կը թափառինք երկրէ երկիր,
ու արմատախլուածութեան ցաւը կը կրենք եւ կը տանինք ամենուր,
եւ հիմա ալ կը տառապինք պապենական երկրի մասունքին ցաւերով՝
ի՛նչ կը սպասէ մեզի, Տէր...

Էր երբեմն աքսորականներ չկրցան իրենց կործանած Սրբավայրէն հեռու՝
երգել հոգեւոր ուրախութեան երգեր եւ նուագել _

Գուցէ ոմանք երգեցին ու նուագեցին խրախճանքներու երգեր, ինչպէս այժմ՝ մեր քով:

Քանի որ գուցէ յոգնած էին անոնք տրտմութենէն, ինչպէս այժմ՝ մեր քով:

Քանի որ գուցէ կը ծածկէին իրենց ճարահատութիւնը, ինչպէս այժմ՝ մեր քով:

Ահաւոր է, Տէր, լքուածութեան զգացումը.

լքուածութիւնը աշխարհի արդարութենէն, որ շահերու ետեւէն էր միշտ եւ է:

Եւ երեւակայեալ լքուածութիւնը՝ Երկինքէն:

Սակայն Դուն, Երկի՛նքդ, սրտերուն մէջն էիր

այն աքսորին մէջ տոչորեալ քու ծառաներուդ,

որոնք չէին կրնար հրաժարիլ քեզմէ,

վասնզի ի՛վ կրնայ իմաստնանալ քան ան՝ որ հետդ է:

Դուն թէպէտ լուռ ես,

սակայն որպէս ամենագէտ մանկավարժ կը դաստիարակես փչելով Շունչը

համբերութեան եւ յարատեւութեան, յոյսի եւ սիրոյ:

Թէեւ այն աքսորականներուն համբերութիւնն ու յարատեւութիւնը, յոյսն ու սէրը

հաղորդակցութիւն մը չէին կրնար ըլլալ

կատարեալ համբերութեանդ եւ յարատեւութեանդ, յոյսիդ եւ սիրոյդ,

այլ էին ատոնց ստուերներ, ինչպէս անոնց սերունդներուն մէջ ալ մնացին այնպէս,

բայց անոնք առաքինացան

այդ ստուերային շնորհներուն թարգմանութեամբ՝

իրենց խորհուրդներով, խօսքերով եւ գործերով,

եւ կը յիշուին որպէս վերադարձի ու վերականգնումի օրինակներ:



Յետ այնու, անոնց պատմութիւնը չդադրեցաւ
ծանր ու սուսկալի եւ ողջակիզումի փորձութիւններով հոլովուելէ,
մինչեւ վերջին ելքը դէպի իրենց տեսիլքներուն երկիրը...
Դուն կը ճանչնաս մարդոց եւ ժողովուրդներուն սահմանափակութիւնները,
եւ անոնց ուղղած հրաւերներուդ մերժումէն՝
սրտնեղելով յաւիտենապէս չես մերժեր զանոնք, ինչպէս Եդեմէն անկեալը չլքեցիր:
Դուն, Տէր, անյիշաչար ես,
եւ միշտ կ'օրհնես համբերողներն ու յարատեւողները, յուսացողներն ու սիրողները,
եւ անոնցմով մնացորդ մը կը փրկես եւ կը ժողովես թելերուդ տակ:
Իսկ դուն, - կ'ըսէ Տէրը, - Հայկեան իմ հօտ մեծաւ մասամբ ցիրուցանեալ,
քեզի պարգեւեցի սրբազան փորձառութիւն մը:
Դուն որ այն փորձառութեան ժողովուրդին պէս յանցանքներ եւ մեղքեր ունեցար,
դառնութիւններ, կոտորածներ, պանդխտութիւն, Եդեմն ու տարագրութիւն ճաշակեցիր՝
պիտի չլքեմ քեզ:
Բայց անյայտ իշխանը, որ կը սպասես
պիտի չըլլայ հին անտառին խռովայոյզ ճիւղերուն գուշակածը,
կամ անոր հսկայ ծառերուն գուշակածը,
կամ անոր անհնազանդ ծայներուն գուշակածը:
Այլ անիկա պիտի ըլլայ ժամանակներուն վրայ իշխանութիւնը
քու համբերութեանդ գործերուն, քու յարատեւութեանդ գործերուն,
քու յոյսիդ գործերուն, եւ քու սիրոյդ գործերուն,
որոնք քեզ պիտի ժողովեն թելերուս տակ...



ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 37

Սորվեցնիր մեզի, Տէր, յիշել,
Դուն որ յիշողութիւններուն յիշողութիւնն ես,
եւ բոլոր ժամանակները տեսողութեանդ մէջն են _
անցեալը կը յիշես, ներկան կը յիշես, ապագան կը յիշես երկնային բարձունքէդ,
որ էր նախքան սկիզբը արարչութեանդ եւ պիտի ըլլայ անոր վախճանէն ետք:
Դուն կը յիշես ո՛չ թէ անցեալին մէջ մնալու
կամ զայն դարձեալ ու վերստին ապրելու համար, այլ՝ զայն նորոգելու.
Դուն կը յիշես ո՛չ թէ ներկային մէջ հաստատուելու
կամ անոր տիրելու համար, այլ զայն՝ նորոգելու.
Դուն կը յիշես ո՛չ թէ ապագային մէջ ինքզինքդ կերտելու
եւ կատարելութեան հասնելու համար, այլ՝ զայն նորոգելու:
Նորոգման Տէրն ես Դուն յափտենապէս, եւ յիշելը՝ նորոգել է յաւետ:
Երկինքն ու երկիրն ալ անցնին՝
Դուն որպէս Նորոգողը պիտի բերես Նոր երկինքն ու Նոր երկիրը:
Յիշողութիւնդ ժամանակներուն յարանորոգումն է՝
Թէ՛ յեղափոխականօրէն եւ թէ՛ եղափոխականօրէն:
Սորվեցնիր մեզի, Տէր, յիշել,
Ո՛չ թէ զգացական, ո՛չ թէ երեւակայական,
Ո՛չ թէ մտային, ո՛չ թէ շահադիտական,
եւ ո՛չ ալ ձեռակերտ արձաններու առջեւ խոնարհելու համար,
այլ արժանի ըլլալու դէմ յանդիման կենալ Նորոգողիդ:
Ի սկզբանէ յիշողութիւնդ լոյսն էր.
Հնորիէ՛ որ այն լոյսին վկաներ ըլլանք:



Յիշողութիւնդ կարգաւորաբար արարելն էր.
շնորհէ՛ որ այն արարման վկաներ ըլլանք:
Յիշողութիւնդ պատկերիդ խառնումն էր մեր կաւէ բնութեան.
շնորհէ՛ որ փառքովդ այն զարդարման վկաներ ըլլանք:
Յիշողութիւնդ բոլոր ժամանակներուն վրայ փչումն էր բարութեանդ.
շնորհէ՛ որ այն փչման վկաներ ըլլանք:
Յիշողութիւնդ անգոհաբան սրտին անկումն էր
եւ դարէ դար ինքնակործան մոլորումը.
շնորհէ՛ որ անոր վկաներ ըլլանք:
Յիշողութիւնդ անկեալն ու մոլորեալը չլքելն էր
եւ պատուիրաններուդ ճրագներով զայն առաջնորդելը.
շնորհէ՛ որ անոր մերձաւորութեանդ եւ ողորմութեանդ վկաներ ըլլանք:
Որո՞նք են վկաները, եթէ ոչ անոնք՝ որ լուսարարակից կ'ըլլան քեզի.
որո՞նք են վկաները, եթէ ոչ անոնք՝ որ ստեղծակից կ'ըլլան քեզի.
որո՞նք են վկաները, եթէ ոչ անոնք՝ որ հոգիներուն զարդարակից կ'ըլլան քեզի.
որո՞նք են վկաները, եթէ ոչ անոնք՝ որ բարիին շնչակից կ'ըլլան քեզի.
որո՞նք են վկաները, եթէ ոչ անոնք՝ որ սգակից կ'ըլլան քեզի.
որո՞նք են վկաները, եթէ ոչ անոնք՝ որ աջակից ճրագակիր կ'ըլլան քեզի:
Եւ ի մի խոստովանութիւն՝
վկաները անոնք են,
որոնք իրենց խաչը վերցնելով՝ կը հետեւին Ծառայիդ:
Սորվեցնո՛ր մեզի, Նորարա՛ր, յիշել,
Դուն որ յիշողութիւններուն յիշողութիւնն ես...

ՍԱՂՄՈՍ ԹԻՒ 38

Ե.Ա.Դ.ի «Ետեւէս եկուր»ին յարասութիւն մը

Կը հետեւիմ քեզի, Յիսուս, որպէս սակարկող մը,
որ վերէն ծննդեան շնորհդ ընդունելուն ի հատուցումն՝
իրեն համար ոչ նուազ քան հրաշալի երկինք մը կ'ակնկալէ քեզմէ,
եւ կը ցանկայ վայելել սէրդ՝ իբր հեշտանք մը
դալար վայրերու եւ փափկահոս վտակներու ընդարմացումը բերող:

Կը հետեւիմ քեզի, Յիսուս, որպէս սակարկող մը,
որ խնճոյքին հրաւերիդ ընդառաջելուն ի հատուցումն՝
իր օրերուն համար զուարճութիւն կ'ակնկալէ քեզմէ,
կարծելով թէ հետդ ըլլալը արբեցութիւն կը խոստանայ:

Կը հետեւիմ քեզի, Յիսուս, որպէս սակարկող մը,
որ մեր տկար բնութիւնը պատմող կարեկից յոգնութիւնդ ճանչնալուն ի հատուցումն՝
իր մարմնին համար կենսաւետող ջուրդ կ'ակնկալէ քեզմէ,
կարծելով թէ անիկա կը մատուցուի մարմնաւոր պապականեր յագեցնելու:

Կը հետեւիմ քեզի, Յիսուս, որպէս սակարկող մը,
որ քեզի աշակերտելուն ի հատուցումն՝
իր սրտին ցնորքները թռթռացնող բառեր կ'ակնկալէ քեզմէ,
կարծելով թէ դուն ականջահաճոյ խօսքերով հմայելու եկած ես:

Կը հետեւիմ քեզի, Յիսուս, որպէս սակարկող մը,
որ յաղթական մուտքերուդ
ամբոխային «Ովսաննա»ներ շոյալելուն ի հատուցումն՝
իր հպարտութեան սնուցում կ'ակնկալէ քեզմէ,
կարծելով թէ քու Թագաւորութիւնդ երկրաւոր է:



Կը հետեւիմ քեզի, Յիսուս, որպէս սակարկող մը,
որ զոհողութեանդ սեղանակից ըլլալուն եւ քեզի ընկերանալուն ի հատուցումն՝
ճաշկերութային եւ զբօսնողական երջանկութիւն կ'ակնկալէ քեզմէ,
կարծելով որ զոհդ եւ քայլակցութիւնդ հաճոյքի եւ անփոյթ ճամբու համար է:
Կը հետեւիմ քեզի, Յիսուս, որպէս սակարկող մը,
որ մոռնալով իր իսկ կողմէ ինքնամատնութիւնը փորձութիւններուն,
որոնք անհրաւնէրուն քեզ ձաղկելուն մասնակցութիւններ են,
իր խոստովանողական տրամադրութեան ի հատուցումն՝
մոխրանալէ փրկուիլ կ'ակնկալէ քեզմէ,
կարծելով թէ ինք զերծ է
քու ամենօրեայ փրկարարութիւնդ ստանձնելու պատասխանատուութենէն:
...Կը հետեւիմ քեզի, Յիսուս, որպէս սակարկող մը,
որ մահէ մահ կ'անցնի՝ քեզմէ իր ակնկալութիւններով,
մինչ դուն խաչը ուսիդ կ'ելլես Գողգոթա՝
կատարեալ անանձնականութեան բարձրութիւնը,
որմէ բունն հո՞՞՞ն է Զօրութեան,
որ ի լրումն ներաշխարհի ժամանակներուն՝
անակնկալօրէն կը ներգործէ
եւ սեփական կեանքին գնով կը տանի Կեանքին...

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 39

Տէր, ան ուխտաւորներու հօտն էր աստուածգիտութեան՝ շնորհիւ ողորմութեանդ, որ տառապանքներու մէջէն կ'ընտրէ ժողովուրդներ՝ Երկնքի արքայութեան երկրին համար գործելու:

Չայն կոչած էիր առաքելութեան,

գոր յանձն առած էր արշալոյսէն մինչեւ Խոր Վիրապ,

ուրկէ արդարութեան արեգակին ճառագայթները սփռուելով տարածուեցան,

եւ սեւ այծեր սպիտակ ջուրէն անցնելով՝ փոխուեցան լուսասպիտակ ոչխարներու:

Հաւատքի բարեսիրութիւնը եղաւ անոր ճանապարհը՝

որ իւրաքանչիւր օր քեզ գտաւ, եւ քեզ գտնելով՝ գտաւ ինքզինք:

Կարեկցութեան բարեսիրութիւնը եղաւ անոր ճանապարհը՝

որ իւրաքանչիւր օր քեզ գտաւ, եւ քեզ գտնելով՝ գտաւ ինքզինք:

Իմացական բարեսիրութիւնը եղաւ անոր ճանապարհը՝

որ իւրաքանչիւր օր քեզ գտաւ, եւ քեզ գտնելով՝ գտաւ ինքզինք:

Արիութեան բարեսիրութիւնը եղաւ անոր ճանապարհը՝

որ իւրաքանչիւր օր քեզ գտաւ, եւ քեզ գտնելով՝ գտաւ ինքզինք:

Միաժամանակ հօտին մէջ ծնան գառներ, որոնք գայլերու փոխուեցան...

Աստուածգիտութիւնը՝ խաչի ճանապարհ մըն էր, բայց նաեւ՝ յարութեան:

Ներսէն, եւ դուրսէն՝

արեւելքէն եւ արեւմուտքէն, հարաւէն եւ հիւսիսէն

վայրագութիւնը խուժեց ճանապարհին վրայ, որ արեամբ ծածկուեցաւ,

եւ արեան լերդացումէն՝ երկինքը խաւարեցաւ:

Բայց ուխտաւորը խարխափելով հանդերձ՝ քալեց,

ու չյանձնուեցաւ համատարած խաւարին,

թէեւ տրտնջաց Լոյսէդ, որ լուռ կ'ընկերանար իրեն:

...Իսկ դուն, Տէր, որ ընտրածիդ չարչարանքները

եւ խաչելութիւնն անգամ անյոյս չես ձգեր,

եւ կ'իմաստաւորես խորհուրդովը փրկարարութեանդ,

ահա այս թանձր գիշերուան մէջ վերստին սեղան կը նստի անոր հետ,

կ'առնես հացը, կ'օրհնես, կը բեկանես զայն եւ կը մատուցես անոր՝ ճաշակելու,

որ ան շարունակէ քալել ընդ քեզ՝ մինչեւ Տիրոջդ օրը,

երբ այլեւս լքուած պիտի չհամարուի ան,

եւ ձեռքերուդ մէջ պիտի ըլլայ ինչպէս շքեղ պսակ մը՝

մարդկութեան մնացորդին համար...

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 40

Բանաստեղծ մըն էր, որ երգեց՝
թէ իր ժողովուրդին հետ խաւար ճամբայէն կ'երթար երկար դարերով,
կ'երթար հայոց լեռներուն մէջ ու մէջէն դէպի վեր...
Կ'երթար ականդովը անգին ծով գանձերուն -
Տէր, նշաններ մխիթարութեանդ:
Կ'երթար հարուածներուն տակ անապատային բարբարոսութիւններուն՝
շփոթեալ, սոսկումնահարեալ, թալանեալ, ջարդեալ, հատուածեալ,
ու անհամար վէրքերով:
Կ'երթար կարօտովը հեռու աստղերուն, երկնքի ծայրին,
եւ հարց կու տար՝
թէ էրբ կը բացուի պայծառ առաւօտ:
Պարզ հոգի մըն էր ան, որուն պարգեւած էիր, Տէր, յոյս մը կարօտի,
եւ ան իր սակաւամասն լեզուով թարգմանած էր զայն -
նձ կրնայ բարբառիլ իր լեզուի սահմաններէն դուրս:
Մաքուր սիրտ մըն էր ան, որուն պարգեւած էիր, Տէր, յոյս մը տեսիլքի,
եւ ան իր կթոտ քայլերով թարգմանած էր զայն
նձ կրնայ յառաջանալ թռիչքով մը՝ որ իր ծունկերուն կարողութիւնը չէ:
Սակայն Դուն գիտես, Տէր, թէ անոր եւ իր ժողովուրդին ընթացքը
դժուար, բարձր, արիւնոտ, սուգի
եւ խիստ մթութեամբ ծածկեալ լեռներուն մէջ ու մէջէն
դէպի վեր ընթացք մըն էր, որուն կ'ընկերանայիր:
Ան եւ իր ժողովուրդը մերձաւորութիւնդ չէին ներիմանար...
Անոնց կարօտը պայծառ առաւօտի մը,
եւ ուժասպառ ու դանդաղօրէն դիմելը վեր՝ ներիմացում մը չէր սակայն,
այն կարօտը եւ դիմումը՝ անբացատրելի կանխալսողութիւնը չէին
առաւել քան պայծառ առաւօտի մը,
պայծառագոյն առաւօտին, որ յաւիտենականդ է...



ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 41

Յանձնապաստան դարուն արեավառ հոգիներուն վառ քերթողն էր՝
տատամսելով խոնարհման առջեւ իր սրտին,
որ հակառակ իր կամակորուպեան կ'աղերսէր քեզի, Տէր:
Դարն էր, որ իր մէջ կ'ամփոփուէր, դարը աստուածամերժ ու աստուածամարտ:
Ան նոյնիսկ դուրսը՝ ցուրտին մէջ, ուր կը մսէր,
իր կամքով կը մերժէր քեզ, Տէր,
իսկ իր սրտով քեզ կը խոստովանէր որպէս իր Էութիւնը, իր հարազատը:
(Ահաւոր է հոգեհերձումը,
որ թոյլ չի տար որեւէ հանդիպում Էութեան հետ,
եւ կ'աղաւաղէ դէպի հարազատութիւն ըլլալն ու հայիլը.
անիկա նոյնիսկ երբ թոյլ տայ որեւէ հանդիպում՝
չհասնելէն կը խեղաթիրէ գոյութիւնը եւ իմաստները,
եւ զանոնք կը նետէ ձեռնածութեան քմայքներուն առջեւ):
Ով քերթող, որ դուրսը կը մսէիր,
եւ սէրդ անգամ չէր կրնար ջերմացնել քեզ, այլ կու լար ցրտագին,
պիտի յիշէիր վկան Նարեկացի:
Յիշելը՝ երկինքէն կաթիլ մըն էր գութի, որ հեզութիւնը արթննար մէջդ,
եւ ոչ թէ մէկ կողմէն անձդ մեղաւոր ներկայացնէիր,
եւ միւս կողմէն զԱստուած փոխարինած կարծող դարը վեհ համարելով՝
անոր համար արի մարտնչող մը ճանչնայիր անձդ:
Միթէ մոռցած էիր բանական զոհին սիրտը,
որ տեսած էր, թէ իր ժամանակի մեղքերը պարարտացած էին ու ճարպակալած,
եւ կը ճգնէր վասն ընդհանրական ամբարշտութեան,
ամբարտաւանութեան, բռնութեան, անյագութեան չարագործութեան,



մարդասիրությանդ դեմ մարտնչումին, ծաղրամտությեան,
սպառնացող գոռոզութեան, կեղծ ջերմեռանդութեան
եւ չարաբեր լեզուին ամբողջական հրկիզումին,
քանի որ ասոնք կը ներծծուէին ջուրի պէս:
Մոռցամ՞ էիր, թէ ան իր հոգիին գերութեան վերադարձը կը փափաքեր,
վերադարձը հոն՝ ուր Տէրն է,
որուն մէջ է միայն, որ կորուսեալը կը վերագտնուի:
Մեղքերուն ներծծումէն՝ արիւնդ վարակուած էր ւախտերով, եւ էր վարակածին,
ինչպէս կը խոստովանէիր:
Ա՛յո, դուն դարն էիր, որուն այգաբացի աղջամուղջը
մեզի համար ոչ թէ միայն արինալիճ մայրամուտի փոխուեցաւ,
այլ բազում արեան լիճերով մայրամուտի:
Դուն դարն էիր, որուն թէ՛ այգաբացի աղջամուղջը, թէ՛ կէսօրը եւ թէ՛ երեկոն ու գիշերը՝
մեզի համար բազմաբազում արեան լիճերու փոխուեցան:
Եւ դեռ, դուն դարն էիր, որուն մէկ ծայրէն միւսը՝
երկիրը արեան անհամար լիճերու եւ ծովերու փոխուեցաւ:
Ով քերթող, դուն՝ երգեցիկ եղէգ ջախջախուած, ախտաւորիս ինքնութիւնն ես նաեւ:
Կը ներես, եթէ խօսքերս թուին՝ թէ քեզ ձաղկելու ես ելած,
զանոնք ընկալէ իբրեւ սասանեալ հանճարիդ ստուերի մը ինքնախոստովանութիւնը,
աղերսարկու՝ արթնօրէն հսկող վկային բարեխօսութեան,
որպէսզի սրտի հեծեճանքներու աղաղակները բոլոր՝
հասնին աշխարհի խաղաղութենէն տարբեր խաղաղութիւն Բաշխողին...

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 42

Հոն՝ բարձրութեան, Անկէզ մորենիին մէջէն խօսեցար, Տէր,
նախապատմելով մարմնանալն ու մարդանալը փրկութեան Խօսքիդ անկէ,
որ ըստ երկնային սիրոյդ եւ խոստումներուն պիտի սփոփէր
գալիք բոլոր ժամանակներուն երկիւղով օժեալները,
պիտի կանխաձայնէր Ս. Հոգիով արիացումը անոնց,
հպարտութիւններուն ոչնչացումը,
չարին ճորտերուն գահազրկումը,
խոնարհներուն բարձրանալը,
անօթիներուն լիացումը բարիքներով,
կեղեքողներուն ունայնանալը,
պաշտպանութիւնը իւրաքանչիւր օր հաւատարիմներու ժողովուրդին:
Դուն, Տէր, այն օրէն խօսեցար թէ՛ անոնց՝
որոնք պատուիրաններդ պիտի վերցնէին իբրեւ ճրագներ,
եւ ուխտէին առաքինութիւններուն իւրը պատրաստել ու պատրաստ ունենալ միշտ,
իրենց կարգին վերածուելով մէկական ճրագներու.
Եւ թէ՛ անոնց՝ որոնք պիտի նախընտրէին
խստասրտութեան կաթսաներուն տակ դնել զանոնք,
եւ կարծել՝ թէ լուսաւոր էին իրենց սենեակները կեանքի:
Դուն Արդարն ես, Անխտրականը:
Ճրագացեալներն էին՝ որոնք պիտի ճանչնային իրաւ երկիրը,
որ այս մոլորակին վրայ երկրէ մը անդին է,
այնտեղ՝ ուր Կամքն է Հօրդ եւ փառքէն խոնարհեալիդ եւ համագոյակիցիդ.
Այն անդինը՝ այլուր մը չէ, այլ՝ այսուր.
Երկիրը Երկնքի արքայութեան՝ որ ի սկզբանէ էր եւ յայտնուեցաւ քեզմով,
երբ շնորհեցիր Աբբայական Ինքնութեան հետ անմեկնելի եւ անճառելի միութիւնդ,
եւ Անոր Հայրիկութիւնը բոլոր անոնց՝
որոնք հոգեւոր չափահասութեան մանուկներն են:

Անկէզ է մորենին, որմէ երկրի վրայ բարբառուեցաւ
Արդարութեան Խօսքը «Երանի»ներու,
մատուցուող ամենուն, բայց ընդունուող անոնցմէ,
որոնք լեռը կ'ելլեն ճանչնալով միախառնուելու աստուածային գիտութեան,
որ է Արեւային՝ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ սփռող իր լոյսը.
է Անծրեւային՝ թէ՛ երկինքէն արդարացուողներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ տեղացող:
Խօսքը նոյնն էր եւ է ու պիտի ըլլայ:
Ան որ լեռը կ'ելլէ՝ աղքատն է հոգեւորապէս,
չափահաս մանուկը՝ օրհնեալ որպէս քաղաքացի Երկնքի արքայութեան, փրկիչ:
Ան որ լեռը կ'ելլէ՝ ապաշխարութեան սգաւորն է,
չափահաս մանուկը՝ օրհնեալ որպէս միսիթարուողը Ս. Հոգիէն, փրկիչ:
Ան որ լեռը կ'ելլէ՝ հեզն է,
չափահաս մանուկը՝ օրհնեալ որպէս ժառանգորդը երկրին Աստուծոյ, փրկիչ:
Ան որ լեռը կ'ելլէ՝ քաղցեալն է եւ պապակեալը արդարութեան,
չափահաս մանուկը՝ օրհնեալ որպէս սպասաւորէդ ծառայութիւն ստացող, փրկիչ:
Ան որ լեռը կ'ելլէ՝ ողորմողն է,
չափահաս մանուկը՝ օրհնեալ որպէս հաղորդակիցը վերին ողորմութեան, փրկիչ:
Ան որ լեռը կ'ելլէ՝ մաքրասիրտն է,
չափահաս մանուկը՝ օրհնեալ որպէս քեզմով եւ Ս. Հոգիով տեսնողը Հօր, փրկիչ:
Ան որ լեռը կ'ելլէ՝ որդի մըն է Անոր,
չափահաս մանուկը՝
օրհնեալ որպէս աշխարհի խաղաղասիրութենէն տարբեր խաղաղութեան նուիրեալ, փրկիչ:
Ան որ լեռը կ'ելլէ՝ հալածեալն է,
չափահաս մանուկը՝ օրհնեալ տոկուն յարատեւութեամբ մը որ Կամքէն է, փրկիչ:
Ան որ լեռը կ'ելլէ՝ ազատեալն է նախատողներու եւ ձաղկողներու խօսքերէն,
չափահաս մանուկը՝ օրհնեալ քեզի հետեւելուն ուրախութեամբ,
որ կեանքէն առաւել Կեանք կ'անցնի, փրկիչ:
Անկէզ է մորենին որ ընդ Հօր եւ ընդ Ս. Հոգւոյդ ընտրեցիր:

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 43

Կը բարկանամ Դուն, Տէր, Սիրողդ ամենայնի:

Մեծ ու խոնարհ դասերու մարդիկ, ժողովուրդներ ու ազգեր կը բարկանան,
իսկ Դուն՝ որ չես մեղանչեր՝ կը բարկանամ...

Պատմութիւնը կ'ըսէ՝ թէ բարկացեր ես այնքան,

որ երկրի մակերեսէն Ջրհեղեղով բնաջնջեր ես մարդկութիւնը,
ու անոնց հետ՝ անասունները, սողունները, երկնքի թռչունները:

Ըստ գրիչին՝ բարկացեր ես նոյնիսկ Աղէտէն վերջ՝ զղջալէ յետոյ կատարածիդ վրայ,
մտածելով՝ թէ արարածիդ ցանկութիւնը մանկութենէն չարին հակեալ է

Արդե՞ծք՝ պիտի ըսէր Յիսուս, եւ դարձեալ մանուկ մը քովը կեցնելով՝

Երկնքի արքայութիւն մտնելու համար՝ անոր նմանելու կոչ ուղղէր:

Ներէ, Տէր, բարկացեր ես բազմիցս, այդպէս են գրեր:

Օրինակ՝ վստահաբար կը յիշես Այգիին առակը, որ մարգարէի մը պատմել տուիր:

Դուն չյիշես՝ ո՞վ պիտի յիշէ, քանի որ եթէ դադրիս յիշել՝

ամբողջ տիեզերքը կը վիժի անդունդին մէջ անյիշողութեան:

Հակառակ դառն փորձառութիւններու՝

սիրեցեալդ մշակեր էիր որպէս այգի մը՝ բարեբեր բլուրի վրայ,

զայն ցանկապատեր էիր, հողէն քարերը հաներ,

ընտիր որթեր տնկեր, կեդրոնին՝ աշտարակ կառուցեր,

հնձան մըն ալ փորեր պատշաճ տեղ մը,

եւ սպասեր որ անիկա ոսկեհատիկ խաղողներ տար,

իսկ անիկա ազոխ էր տուեր:



Մնացեալը՝ նկարագրութիւնն է բարկութեանդ:
Սակայն վերստին՝ Դուն վերջնականապէս չէիր քած շնորհագրկեալ այգիդ:
Կը բարկանամ Դուն, Տէր, Սիրողդ ամենայնի:
...Քու բարկութիւնդ չէ այլ երեւոյթ՝ քան ողորմութիւնը Սիրոյդ, թիրաբար ընկալուած,
այլապէս՝ կը քէիր վերջնականապէս, ըստ մեզի՝ լքուելու արժանին:
Քու բարկութիւնդ ոչ թէ ուժ մըն է բրտութեան, քանդումի եւ կործանումի,
այլ զօրութիւն խստասրտութեան փարատումին:
Բրտութիւնը, քանդումը եւ կործանումը քեզմէ չէին, չեն ու պիտի չըլլան.
անոնք Սրբութեանդ եւ Կամքիդ չընդունուելէն էին, են ու պիտի ըլլան:
Ակնարկեցի գրիչին եւ գրիչներուն,
որոնք իրենց ժողովուրդի սաստիկ ցաւերուն մէջ,
ցաւերէն վարակեալ՝ բրտութիւնները բարկութեանդ վերագրեր էին,
որովհետեւ այդ տեսեր էին փառաւունէն եւ իրենց վրայ իշխողներէն:
Բայց Սրբութեանդ եւ Կամքիդ դէմ մարտնչիլն է,
որ ինքզինք կը դատապարտէ սեփական եւ այլոց բարկութեան յորձանապտոյտներուն:
Սորվեցո՛ւր, Սէր, ողորմութեանդ բարկութիւնը...

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 44

Երկնքին մէջ յառաջընթաց է Յոյսդ եւ Սէրդ, Տէր,
անիկա փայլելով կ'առաջնորդէ դէպի կատարեալ որդեգրութիւնը:
Գուշակութեամբ մը չէ, որ անիկա կը տեսնուի, այլ շնորհիդ մէջ արթնացմամբ:
Արթնացումը՝ մոգութիւնը, ինչպէս այլ ասպարէզներ կը վերածէ մարգարէութեան:
Դուն՝ զարմանահրաշ երեւումներով կը ծայնես եւ կը յայտնուիս,
եւ հաւատարիմներուդ քայլերը կ'ուղղես հոն՝
ուր խոստացուած երկիրն է արքայութեանդ, որուն գահակալն է մսուրին արքան:
Քայլերը կը հնազանդին փայլումիդ բարբառին,
աճող ու ներգուարթ համբերութեամբ կը հետեւին անոր,
խորհուրդով, խօսքով եւ գործով իմաստաւորուող յարատեւութեամբ:
Անոնք ոսկիներ կ'ըլլան, կնդրուկներ կ'ըլլան, զմուռներ կ'ըլլան _
ոսկի, կնդրուկ, զմուռ խորհուրդներ.
ոսկի, կնդրուկ, զմուռ խօսքեր.
ոսկի, կնդրուկ, զմուռ գործեր:
Անոնք մարգարէութիւններ կ'ըլլան փառքիդ անմատոյց լոյսին.
անոնք մարգարէութիւններ կ'ըլլան մահուան վրայ իսկ հոնկէ փչող Կեանքի բոյրին.
անոնք մարգարէութիւններ կ'ըլլան
այն բոյրով դիակնացեալ մարմիններուն յառնումին:
Երկնքին մէջ յառաջընթաց է Յոյսդ եւ Սէրդ, Տէր,
մինչեւ խաւարէն ազատագրումը իր լրումին հասնի,
ի մարդիկ հաճութիւնը բերկրանքի անկողոպտելի հանդերձը զգենու,
եւ գայլերն ու գառները, ինձերը եւ ուլերը,
հորթերն ու կորիւնները եւ զուարակները,
եւ բոլոր վայրի ու ընտանի կենդանիները իրենց ծագերով միասին
Տիրոջ գիտութեամբ ներդաշնակեալ փայլին որպէս աստղեր...

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 45

«Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն»...

Սակայն Աբբա, Հայրիկ մեր,

Դուն չէ, որ փորձութեան կը տանիս մեզ, այլ՝ մենք մեզ:

Արդարեւ, այս կեանքն ամբողջ փորձութիւն է,

բայց այն օրէն երբ կը սկսինք այլոց համբերութիւնը հատցնել՝

կը նահանջենք դէպի փորձութիւնը, որ եւ ձգտումն է համբերութիւնդ հատցնելու:

Թէեւ համբերութիւնդ չի սպառիր:

Սակայն մենք այլոց համբերութիւնը հատցնելով՝ կը սպառենք մեր համբերութիւնը:

Անկասկած, մեր համբերութեան հատած ըլլալն է,

որ կը ձգտի ուրիշներուն համբերութիւնը հատցնելու:

Դուն մեր նահանջին մէջ՝

համբերութեամբդ Կամքիդ էմմանուէլեան նշանէն չես զրկեր մեզ:

Մանանայացեալ Բանին նշանն է ան նաեւ,

որ թէեւ էապէս կաթնահամ եւ մեղրնահամ,

սակայն որպէս մարդասիրութիւնն իսկ՝ հեզաբար եւ խոնարհաբար

պատուիրաններուդ կաթով եւ մեղրով սնանեցաւ,

աճեցաւ ու հասաւ չարը մերժելու եւ բարին ընտրելու գիտութեան,

որ իրն էր ի սկզբանէ:

Նշանն այն կը կրթէ, թէ պատուիրաններուդ կաթով եւ մեղրով սնանիլը,

աճիլն ու հասնիլը չարին մերժման եւ բարին ընտրող գիտութեան,

եւ զինք (Կամքիդ բոլոր ժամանակներուն մէջ կատարումին ամփոփարան) ճաշակելը՝

տեսնել է, թէ Դուն ընդ մեզ ես,

եւ թէ Դուն փորձութեան նահանջէն կը դարձնես մեզ դէպի քեզ՝

յարուցանողդ յառաջանալու,

յուսաւէտ ու սիրաւէտ համբերութեան քայլերով:

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 46


Ով Առաջին Պարտիզան,
Դու՛ն մարդը արարեցիր եւ մշակի իշխանութեան կարգեցիր:
Եւ փոխանակ անոր սորվեցնելու երկրագործութեան գիտութիւնը,
որուն իր քրտինքով պիտի հասնէր,
Նախ եւ առաջ աւանդեցիր ճշմարտութեան պատուիրանը,
որ է աղօթելը հոգիով եւ մտքով, ըստ շարականագրին:
Տէր, զիս հիացականօրէն կը զարմացնէ օրհներգողին այս մեկնութիւնը,
քանի որ ըստ Սրբազան խօսքին՝
առաջին պատուիրանը որ Դու՛ն աւանդեցիր,
յորդոր է եղեմական պարտէզին բոլոր ծառերէն ուտել՝
բացի ծառէն բարիի եւ չարի գիտութեան,
վասնզի անկէ ուտելը՝ մահաբեր պիտի ըլլար:
Սակայն ան որ կատարեալ վայելչութեամբ շրջապատուած էր,
եւ Լոյսիդ ճառագայթին դրոշմը իր հոգիին վրայ ունէր,
ինչպէ՛ս գիտնար, թէ ի՛նչ է բարի եւ ի՛նչ է չար, եւ ի՛նչ է մահը:
Տեսողութենէդ սահմանեալ բարիին մէջն էր ան,
եւ մահուան փորձառութիւնը չէր ունեցած
ան երբեք ալ պիտի չունենար փորձառութիւնը մահուան,
այլ լոկ ուրիշներուն մահուան ականատես կամ ականջալուր պիտի ըլլար,
եւ երբ մահը իրեն գար՝ արդէն փորձառութիւնը պիտի ջնջուէր:
Էակը շնչատրած էիր ազատութեամբ, որ ունէր կարողութիւնը ընտրութեան եւ ընթացքի.
Թէ՛ կրնար Լոյսիդ ճառագայթով վաւերանալ իւրաքանչիւր օր,
եւ ըստ դրոշմիդ՝ քեզի պատկանելու ընտրութեամբ եւ ընթացքով ապրիլ,
թէ՛ ալ կրնար իր գերմարդանալու ցնորքներուն օճը կամ իժը կամ վիշապը ստեղծել,
ու պատկանիլ ոչինչին...

Խորիմաստ է դրուագը եւ մարդկային պատմութեան փորձառութիւնը կը պատմէ,
մինչեւ իսկ մեր այսօրուայ փորձառութիւնը՝ բացայայտօրէն ոչնչապաշտ:

Բարիի եւ չարի գիտութեան ծառը՝
էակիդ իր սեփական անձը աստուածացնելու ցանկութեան ծառն է,
որով իր ցնորքներուն բարին կ'ընտրէ, եւ ցնորքներուն չարը կը մերժէ,
եւ մահուան կը յանձնուի:

Կը յիշեցնես ինձի, Տէր, թէ դրուագը ուր արձանագրուած է յորդորդ՝
մարգարէական իմաստասիրութիւն մըն է էակիդ ազատութեան անկումին:
Ժամանակակից մարտիրոս մը կ'ըսէ,
թէ անկեալը կը զգայ, կը կամենայ, կը մտածէ եւ կ'ապրի
դառնալով յոռի շրջանակին մէջ անազատութեան:

...էակիդ իշխանական կարգը արարչութեանդ վրայ՝ թիրիմացութիւն է,
եթէ ան չի մշակեր եւ մշակելով չ'արարեր ինքզինք:
Անոր հոգիին վրայ դրոշմդ՝ շնորհն է հոգիի պարտիզպանութեան,
որ միշտ զարթուն մեկնութեամբը խօսքին՝ էապէս աղօթական է...
Պատուիրաններուդ աշակերտութիւնը եւ ստանձնումը աղօթել է,
եւ ըլլալ անդին ցնորքներուն բարիէն եւ չարէն, ու մահուան շրջանակէն:
Բարի լուրիդ աշակերտութիւնը եւ ստանձնումը աղօթել է,
եւ ըլլալ անդին ցնորքներուն բարիէն եւ չարէն, ու մահուան շրջանակէն:
Աղօթելը աշակերտութիւն եւ ստանձնում է պատուիրաններուդ եւ Բարի լուրիդ,
եւ ըլլալ անդին ցնորքներուն բարիէն եւ չարէն, ու մահուան շրջանակէն:
Ահա գիտութիւնը, մշակութեան իշխանաւոր,
որ կը զգայ, կը մտածէ, կը կամենայ, կ'ապրի ըստ Լուսադրոշմին:
Ամէն առաւօտ, եւ ամէն կէսօր, եւ ամէն մայրամուտին դուն պիտի ելլես եւ գործես,
հերկես հողը, ցորենի ոսկեհատիկները եւ աստղահատիկները ցանես
(այսպէս է յաւիտենականին պարտիզպանութիւնը),
եւ Տէրը օրինելով պիտի աճեցնէ զանոնք,
որպէսզի դուն յաղթահասակ կանգնիս հեզարար Բարութեան եւ Կեանքին մէջ:



ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 47

Ընտրեալ Հօրմէ,
արեւելքէն եւ արեւմուտքէն, հիւսիսէն եւ հարաւէն
հարուածներ եւ լքումներ եւ շահեր յոյսդ կտրելու համար վրադ պիտի խուժեն:
Դուն ապրիր եօթնիցս եօթնարփեան շնորհներովդ,
որ քեզ բազմադարեան ալիքներուն անդունդներէն
եւ լեռնակուտակ կատաղութիւններէն դուրս է բերեր:
Քանի քանի անգամ նաւդ խորտակուեցաւ:
Բայց քանի քանի անգամ անճառելիօրէն վերակազմուեցաւ...
Դուն վերստին ամեհի ալիքներու վայրիվերումներէն կը տատանիս:
Սարսափելի են տատանումներդ: Բայց վախերդ վիատութեան թող չփոխուին:
Դուն պիտի անցնիս այս փորձութիւններէն, եւ գալիք բոլոր փորձութիւններէն:
Արշալոյսը պիտի հասնի քեզի եւ ողջունէ ու զարդարէ միաբանութիւնդ:

ՍԱՂՄՈՍ ԹԻԻ 48

Ի յիշատակ Գարեգին Կթղ. Սարգիսեանի

Այսօր նաւդ պապենական երկրին մնացորդն է,
որ աշխարհի ովկիանին մէջն է փոթորիկներէ բռնուած:
Քամիները կ'ոռնան, եւ անդունդներ ու լեռնանման ալիքներ կը սպառնան...
Ո՛ր է նաւապետդ, ո՛ր ես անոր օգնականները,
որ ճիգ ընեն նաւը այնպէս ղեկավարելու, որ չխորտակուի:
Նաւապետ չունիս դուն, բացի բարի նաւապետէն՝ քեզ լսող, եւ փրկող:
Եւ անոր օգնականութիւնը քեզի պարգեւուած է արդէն,
այն օրէն՝ երբ ան քեզ կոչեց եւ դուն ընդառաջեցիր երկնքին որդեգրութեան:
Որդեգրութիւնն է, որ քեզ արժանացուց օրինակ Հոիսփիմէի տաճարը կառուցելու:
Դուն կառուցեցիր զայն
որպէս բոլոր ժամանակներուն մէջ վկայ մը Տիրոջ հետ հանդիպումիդ,
եւ անկա կանգնեցաւ հոգիով եւ ոչ թէ քարերով,
եւ ինչպէս տեսիլներու գրող մը պիտի ըսէր՝
արեւային դիզուածութիւններով եւ մտքի վերջնական պայծառութիւնով:
Տեսլաւորը շնորհաբաշխիչին հետ հանդիպումդ չէր տեսած:
Ըստ իրեն, քու հոգիիդ ներքնախորքին՝ Տէրը օտար մնացած էր քեզի....:



Ճշմարիտ եւ ճշմարիտ է սակայն, թէ Տէրը ապրած էր քու հոգիիդ մէջ.
դիմանալդ, գաղափարներդ եւ յղացումներդ անոր շնորհներն էին,
դուն ստեղծագործաբար խոստովանած էիր անոր մասին՝
երկնային իմաստութիւններուն թարգմանութեամբ,
պարզ ու խորունկ տաճարներովդ,
գիրովդ, երաժշտութեամբդ, մանրանկարչութեամբդ եւ միւս արուեստներովդ՝
որոնց գետերուն ափերը փառքին ծաղկազարդումն են:
Տիրոջ յարութիւնը՝ քու վերականգնումներուդ յոյսը եղաւ,
նոյնիսկ անիծելի գիշերներուն մէջ:
Դուն փոխանակ անիծելու խաւարը՝ վառեցիր ինքնաստեղծումի մոմեր,
որոնք վախճանական արեգակը եւ անոր պայծառութիւնը ամփոփեցին,
ինչպէս Հռիփսիմէի տաճարը՝ վկայ մը վկաներէն:
Արդ, սոսկալի գիշերները պիտի անցնին հոգիի ստեղծումներովդ,
ու վկայարան նաւդ հասնի արդարութեան դարաշրջան...

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱՆԿԱՐԿ.



Գառնիկ Ա. Քինյ. Գոյունեան, աազանի անունով՝ Գէորգ, ծնած է Պորճ Համմուտ, Լիբանան, 1967-ին: Նախնական կրթութիւնը ստացած՝ Սրբոց Քառասնից Մանկանց Վարժարանին մէջ: Ապա՝ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք մտած: Սարկաագութեան՝ աշակերտած է Գարեգին Կթղ. Սարգիսեանի, Արտաազդ Արք. Թոթոեանի, Արամ Կթղ. Քէշիշեանի, Զարեհ Արք. Ազնաւորեանի, եւ պատմագէտ ու բանասէր Վազգէն Ղուկասեանի: Պէյրութի հայ վարժարաններու մէջ հայագիտական նիւթեր դասաւանդած է: 1995-ին, Քահանայական Օծում ստացած՝ Փարիզի Յովհաննէս Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ մէջ: 2000-ին՝ փոխադրուած Մոնթրէալ եւ ստանձնած Ս. Յակոբ Եկեղեցւոյ հովուական ծառայութիւնը, որուն քովն ի վեր՝ նաեւ հայ մշակոյթին եւ հայ գիրին սպասատր մըն է:

Մշակութային ծիրին մէջ՝ Ա) Կրօնագիտական, բարոյագիտական եւ գրական դասախօսութիւններ, լսարաններ: Բ) «Նոր Ծաղիկ» մանկապատանեկան երգչախումբի ստեղծում եւ կազմակերպում համերգներուն _ երգչախումբին համերգներէն յատկապէս յիշատակելի են՝ 1) Բ. Կանաչեանի «Նանօր»ին վերախմբագրեալ քերթաածերգին (վերախմբագրումը կատարուած խմբավարին՝ Էլիզապէթ Պտղունի-Հարպոյեանի եւ իր կողմէ, իսկ երաժշտութիւնը՝ պատշաճեցուած եւ մշակուած Պետրոս Շուժունեանէ) մատուցումը. եւ 2) Մանկապատանեկան Պատարագի (խօսքերը իրն են, երաժշտութիւնը՝ Արեգ Լուսինեանի) մատուցումը: Գ) Համագործակցութեամբ երաժիշտ Շուժունեանի՝ կազմակերպում համերգներու եւ նուագոյթներու, ինչպէս՝ 1) Կոմիտաս Վարդապետի ծննդեան 140-ամեակին նուիրուած համերգ մը, երգեցողութեամբ Viva Voce երգչախումբին. 2) Համերգ՝ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին նուիրուած «Վերածնունդի Պատարագ»ին (առաջարկը եւ բովանդակութեան կարգաւորութիւնը՝ իրն են, երաժշտութիւնը՝ Շուժունեանի), երգեցողութեամբ առիթին համար մեծացեալ St. Laurent երգչախումբին (120 հոգիներ): Դ) Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ պատկերազարդման համար համագործակցութիւն նկարիչներու հետ, ինչպէս՝ Պետրոս Ասլանեանի եւ Պերճ Զաքըճեանի:

Հայ գիրի ծիրին մէջ՝ Ա) Խմբագրում Կարապետ Եպս. Տէր Մկրտչեանէ գիրքի մը («Քրիստոնէութեան Իսկութիւնը»): Բ) Խմբագրում եւ հրատարակում «Մաշթոց» Մատենաշարի (5 գիրքեր լոյս տեսած են. երկու գիրք՝ համագործակցաբար Իշխան Զիֆթեանի եւ Մարուշ Երամեանի), խմբագրում եւ հրատարակում «Բան եւ Գիր» Մատենաշարի (11 գիրքեր լոյս տեսած են): Գ) Կրօնագիտական, բայոյագիտական եւ գրական ուսումնասիրութիւններ, Դ) թարգմանութիւններ (ցարդհրատարակուած երկու գիրք Ալեքսանդր Շմեմանէ): Ե) Ինքնագիր հրատարակութիւններ՝ «Գրիգոր Նարեկացիի "Մեկնութիւն Երգոց Երգոյն Սողոմոնի" Գրքին Մեկնագիտութիւնը», «Եղծուած Հաղորդութիւնը», «Արամ Ա./Հայ Աստուածաբանական Մտքի Վերանորոգումին Համար», «Պատմութիւն Ս. Յակոբի Համայնքին/Որ Ի Մոնթրէալ, Գանատա», «Խոկումներ/Գր. Նարեկացիի "Մատենա Ողբերգութեան"ի Ընթերցմամբ», Ա. Տետր (կը բովանդակէ 139 խոկումներ Մատենաի առաջին 5 գլուխներուն վրայ):

